



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

640

611  
Z-17

12002

2010

882' ԹԱՐԵՐԱ

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ ԱՆՁՈՅՑ ԿԱՅԵՒԹՈՒՅՑ

ԱՇԽԱՏԱԾԱՐԱԿԵՐՊ  
ԵՐԿՈՒՅ ՀԱՐԱՀԱՏ  
ՅՈՎՍԵՓՈՅ ԵՎ ԱՆՏՈՆԻ ՅԱԿՈԲԵԱՆ

معارف نظارت جلیل استن ۷۰۷ نومروی رخصتاده سید طبع او نشاند



Ա. ԳՈԼԻԿ  
ԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

611

2-17

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

S. S. ՄԱԿԱՐԱՅ

ՈՐԲԱՇԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐբոՅ ԵՐՈՒՍԱԼԻՄԱՅ

S. ՅԱՐԱՒԹԻՒՆ Ս. ԱՐԳԵՎՈՒՄԿՈՎՈՍԻ

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ԵԿ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱԴԻՆՈՒԹՈՒՆՅ

S. ԽՈՐԵՎ Ս. ԱՐԳԵՎՈՒՄԿՈՎՈՍԻ

ԱԾԲԳԵԱՆ

Դաշերթնար, յ. յարդիկան  
Տառքիդ 33, հ. Բլում, գրչէ,  
Տաս 1884 սկ, 20 թ,



ՅԱՐՏՈՒՐ ՈՐԴԻԱԿԱՆ

Ի ՅԻՇԱՍԱԿ ՀՕՐՆ ԻՒՐԵԱՆՅ ՍԻՐԵՑԵԼՈՅ

ՅԱԿՈԲԱՅ ՖԵՆՔՐՁԵԱՆ

Որ հանգեաւ եւեստամենի յամին 1867,

Դ 29 Նոյեմբեր ամսայ

ՆՈՒԵՐԵՆ ՈՐԴԻԱՅ ԽԱՆՉԱԿԱԹՔ

ԶԻՒՐԵԱՆՅ ԵՐԿՈՅ ԶԱՅՍ ԴՈՅՉՆ ՊՑՈՒՂ

Հանգիք 'ի վաստակոցդ, հանգիք արդ յամայր,  
Թռուցեալ հոգւովդ յերկինս անդ լինել մեզ հայր:  
Սնա փոխեալ 'ի քաղցը՝ ըզդառն արտասոււ՝  
Յիշատակաւդ հայեալ ծիփմք 'ի վեր կոյս,  
Դարձուցեալ յայսմնեսէ միշտ զաշս ընդ երկին,  
Ուր ահ նմք աղօրիւքդ մեզ զանձք յաւելցին :



26931-ահ.

Ա.Ռ ԸՆԹԵՐՅՈՒՆԵԼԻՍ

Անուրանալի հւմարտութիւն մ' է որ ամէն տեսակ գիտութիւնք ունին իրենց յատուկ օգուտներն ։ Կրօնի ուսումն' կը կրէ մարդուս հոգին եւ կ'ազնուացնէ զայն տեսակ տեսակ առաքինութեամբ։ Ասդարաւ-խութիւնը՝ կը մեկնէ մոլորակաց եւ աստեղց գաղ-տածածուկ պաշտօնը։ Երկրարանու, նը՝ ի վեր կը հանէ երկրիս հազարաւոր խաւերուն զարմանալի կազմութիւնը։ Բուսաբանութիւնը՝ կը բացատրէ բու-սոց տեսակը եւ անումը։ Հանքարանութիւնը՝ կը պարզէ երկրիս տակ բաղուած հաներուն բաղադրու-թիւնը եւ որպիսութիւնը։ Խոկ Մարդակազմութիւնն որ է, մին ՚ի գերազոյն գիտութեանց, կը ճառէ մարդ-կանց հիասքանչ կազմուածին վերայ։

Մարդակազմութիւնն է ուրեմն այն գիտութիւնը, որ կ'ուսուցանէ մարդուս բնական գործողութիւններն եւ նոցա կատարման եղանակը յօդու եւ ՚ի շահ բա-րոյական եւ Ֆիզիկական առողջութեան։ Ուստի խիս կարեւոր է ճանաչել թէ որննէն են սոյն գործողութիւնն եւ ինչպէս կը կատարուին, թէ ինչ է մարմնային մեխնայն եւ ինչ նիւթերէ կազմեալ։ Եւ քանի որ մեխնազործի մը աւագ պարտաւորութիւնն է իրեն յանձնուած մեխնայն բազավէս ճանշնալ զայն ան-վրտանգ կարենալ գործածելու համար, ապա մարդու որշափի եւս առաւել պարտաւոր է լաւագոյնս ու-սումնասիրել իւր մարմնեղին փափկահրաւ մեխնայն, մեխնայ Աստուածատեղծ որ անհունապէս զեր ի վեր է տան զայլ մեխնայս մարդակերս։



5837-57

Հետեւաբար ճանաչելով զպէս եւ զօդուս Մարդակազմութեան, ձեռնարկեցին սոյն կարեւոր եւ օգտահա գիտութեան վերայ պարզ եւ մեկին գրեոյկ մը յերիւրել, ընթիր երկասիրութիւններ մեզ ուղեցոյց ունենալով :

Թէեւ ոմանի՞ ի բարեկամաց խորհուրդ կու տային մեզ առողջաբանութեան կարեւոր գիտելիքներ եւս յաւելով ի՞ սոյն երկասիրութիւն, այլ մեք աւելորդ վարկաֆ, զի բժեկական հմտութիւնը մրայն ձեռնիսա է յայդմ :

Ներկայ մատեանս բաժանեցինք երեքտասան զլուխներու, յորս աշակերտն կարող սիմի լինի դիւրաւ ըմբոնել զՄարդակազմութիւն. մանաւանդ որ իւրաքանչիւր հատուած կը պարունակի Հարց-պատասխանի, եւ բառասի չափ պատիեր՝ տղայոց դեռաբոլքոց մասց մէջ տեսականապէս պիտի տպաւուեն իրենց ուսածքը : Եւ վերջապէս ընտելացնելու համար զաւակերտս մատենիս մէջ զժնուած գիտական բառից, հարկ համարեցինք յիշեալ բառերուն համապատասխան թրանսերէնը եւ Թուրքերէնը՝ զործոյս վերջի երեսին մէջ փոքրիկ բառարանի մը ձեւոյն ներին ներկայացնել առ ուսանողս :

Կը յուսանիք քէ յարգոյ թնախօսք եւ Ռւսուցիչք ի նկատ առնելով մեր անկարողութիւնը, ներողամիտ կը զժնուին զործոյս մէջ սպրդած ակամայ բերութեանց :

#### ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂՔՆ

Կ. Պոլիս, 25 Ապրիլ 1890.



## S U R E R Ք

# Մարդակազմութեան

ԳԼՈՒԽ Ա.

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Մարդակազմութիւնը :

ՊԱՏԱՍԽԱՆ. Մարդակազմութիւնը մարդկային կազմութեան գիտութիւնն է, որ նաև քան զկենդանաբանութիւն անհրաժեշտ է ուսանիլ. վասն զի մարդս ամենակատարեալ կենդանի մը լինելով իրաւունք ունի կենդանաբանութեան առաջին եւ զլիսաւոր մասը կազմելու :

Հ. Մարդկային արտաքին կազմութիւնը քանի մասի կը բաժնուի :

Պ. Մարդկային արտաքին կազմութիւնը այսինքն ՄԱՐՄԻՆԸ զլիսաւոր երեք որոշ մասերու կը բաժնուի. 1<sup>o</sup> Գլուխ, 2<sup>o</sup> Իրան եւ 3<sup>o</sup> Անդամ :

- Հ. Գլուխը քանի մասի կը բաժնուի։  
 Պ. Գլուխը երկու մասի կը բաժնուի. 1°  
 Գամկ և 2° Դէմֆ։  
 Հ. Գանկին մասանց ի՞նչ կ'ըսուի։  
 Պ. Գանկին բարձրագոյն մասը կ'ըսուի Գա-  
 զար, ետեւի մասը Սնարք և ականջաց առջենի  
 երկու կողմը կ'ըսուի Քունի կամ Խանունի։  
 Հ. Դիմաց մէջ ի՞նչ պէտք է հասկնալ։  
 Պ. Դիմաց մէջ պէտք է հասկնալ Ճակատը  
 որ կը սահմանուի վերէն դլսուն Մազովը, վա-  
 րի կողմը Յոնիերովը եւ երկու քովէն Քունիե-  
 րովը, երկու Այժ իրենց Կոպերով Այտերը, Քի-  
 թը, Բերանը իւր կակուղ եւ շարժուն Շրբունի-  
 ներովը եւ վերջապէս Ծնօսը ճակատը, բերա-  
 նը մէկ ուղղահայեաց գծի վերայ են։  
 Հ. Իրանը ո՞րու հետ կցուած է։  
 Պ. Իրանը գլխուն հետ Վիզով կցուած է,  
 որոյ առջեւի կողմը կը դանուի Կոկորդը եւ  
 Շնչափոյը, իսկ ետեւի կողմը կը դանուի Ծօծ-  
 րակը եւ Շլիմիը։  
 Հ. Իրանը ինչպիսի մասանց կը բաժնուի։  
 Պ. Իրանը վերին եւ ստորին մասանց կը  
 բաժնուի։ Վերին մասը կը պարունակէ վերէն  
 եւ երկու քովէն Ուսերը, առջեւէն Կործիը,  
 ետեւէն Թիկունիը։ Ստորին մասը կը պարու-  
 նակէ առջեւէն Որովայնը, ետեւէն Մէջը,

- Երկու Կողերը, Ազդրը և վերջապէս Յետուցիլ։  
 Հ. Մարդս քանի անդամունի։  
 Պ. Մարդս չորս անդամ ունի, Երկուքը  
 վերին եւ երկուքը ստորին։  
 Հ. Վերին անդամոց իւրաքանչիւրն քանի  
 մասանց կը բաժնուի։  
 Պ. Երեք մասանց. 1° Բազուկ, 2° Ծղիկ  
 եւ 3° Զեռն։ Բազուկը վերէն միացած է ու-  
 սին, վարէն ծղոյն Արմուկի միջոցաւ եւ ծղիկը  
 ձեռքի կցուած է։  
 Հ. Զեռքին մէջ ի՞նչ բան կը նանք որոշել։  
 Պ. Զեռքին մէջ կը նանք որոշել Ափը,  
 Դասակը եւ Մատունիը։  
 Հ. Մատանց թիւն քանի է։  
 Պ. Մատանց թիւն հինգ է. 1° Բղթամաս, 2°  
 Յուցամաս, 3° Միջամաս, 4° Խածմաս և 5° Ճը-  
 կոյդ կամ Ծկամաս։ Բթամատը երկու յօդուած-  
 ներէ կը բազկանայ իսկ միւսքն երեքեան։ Բթա-  
 մատը կը լնդգիմելի ըլլալ միւս չորս մատանց՝  
 այսինքն առջեւի կողմէն միւս մատերը շօշափել,  
 այս յատկութեամբ ձեռքի ստոքէն կ'որոշէ։  
 Հ. Ստորին անդամք վերին անդամոց կը  
 նմանին մասանց թուով, կարգադրութեամբ և  
 կազմութեամբ։

Հ. Ստորին անդամոց իւրաքանչիւ լն ի՞նչ  
կը պարունակէ :

Պ. Ստորին անդամոց իւրաքանչիւրն կը  
պարունակէ 1° Բարձ, 2° Մրումի եւ 3° Ասմ:  
Բարձը վերի կողմէն ցայլից հետ միացած է,  
եւ վարէն ծունկովը սրունքին և սա ոտքին:

Հ. Ոտքը ի՞նչ կը պարունակէ :

Պ. Ոտքը որ քալելու եւ կանգնելու գոր-  
ծարանն է ունի 1° Թաթ, 2° Գարշապար,  
3° Կրունելի եւ 4° Մատունիք: Ոտքին մատերը  
ձեռքին մատերէն կարճ են: Ցուցամատը ընդ-  
դիմելի չէ միւս մատանց, որով բռնողութեան  
չը կրնար ծառայել:

Հ. Ոտքի եւ ձեռքի մատերը ի՞նչով կը  
վերջանան:

Պ. Ոտքի եւ ձեռքի մատանց վերջի յօ-  
դուածը Եղունգներով կը վերջանայ:

Հ. Մարմինը ի՞նչով ծածկուած է:

Պ. Ամբողջ մարմինը փափուկ մորթով մը  
ծածկուած է, որոյ վերայ տեղ տեղ կը գտնուին  
1° Մազ ինչպէս է դլխուն մազը, 2° Յօնիք,  
3° Արտեանունիք, 4° Ընչացիք, 5° Մօրուիք  
եւայլն:

Այսպէս ուրեմն մարդկանց սքանչելի կազ-  
մութիւնը կ'առաջնորդէ իլեն ամենէն գժուար  
եւ ամենէն նրբին գործոց մէջ:

ԳԼՈՒԽ Բ.

### ՑԵՂՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ

Հ. Երկրագնդիո վրայ գտնուած ամբողջ  
մարդիկ քանի ցեղերու կը բաժնուին:

Պ. Երկրիս վերայ ամէն գօտիներու մէջ  
Հազար հինգ հարիւր միլիոն մարդիկ մարմնոյ  
զանազան կազմութիւն կը ներկայացնեն և սո-  
վորաբար հինգ կամ՝ երեք ցեղերու կը բաժ-  
նուին, որք են.

- 1° Կովկասեան կամ՝ Սպիտակ,
- 2° Մոնղոլեան կամ՝ ԴեղիԱ,
- 3° Երովաչեան կամ՝ Սեաւ,
- 4° Ամերիկեան կամ՝ Կարմրամորթ,
- 5° Մալայեան կամ՝ Թիագոյն,

Հ. Ոյք են Կովկասեանք եւ ուր կը բնա-  
կին:

Պ. Կովկասեանք ունին ձուածեւ զլուխ,  
փափուկ եւ իփտ մազերով (ոեաւ խարտեաշ)՝  
ծածկուած, կարմիր այտեր, բարձր եւ փայ-  
լուն ճակատ, խոշոր եւ ձեւաւոր քիլ, բերան  
չափաւոր, աչք քաղցրահայեաց:

Այս մարդիկ իւրեանց նախնի բնակութենէն



այսինքն Կովկասիային կամ՝ Փոքր Ասիային  
տարածուած են Հարաւային Արեւմտեան Ասիա,  
Հիւսիսային Ափրիկէ և աւելի քան այլուր յեւ-  
րողա։ Այս ցեղը զիտութեանց եւ արուեստից

մէջ օր քան զօր բարգաւաճելու եւ զարգա-  
նալու վերայ է։

Հ. Ո՞յք են Մոնկոլեանք և ո՞ւր կը բնակին։

Պ. Մոնկոլեանք ունին գեղնագոյն մորթ,  
եռանկիւնաձեւ զլուխ, իրարմէ հեռի խոտոր-  
նակ աչքեր, դուրս ցցուած այտեր, մեծ բե-  
րան, երկայն եւ ցանցառ մազեր։

Ս.յս մարդիկ կը բնակին Հիւսիւսային եւ Ա-  
րեւելեան Ասիա։ Այս ցեղին կը վերաբերին  
Աւստրալիացիք, Լավոննք (Եւրոպիոյ Հիւսիւ-  
սային կողմը), Փոքրահասակ Եսքիմացիք (Ա-  
մերիկայի Հիւսիւսային կողմը)։

Հ. Ո՞յք են Եթովպացիք եւ ո՞ւր կը բնակին։

Պ. Եթովպացիք ունին կլոր գլուխ, հաստ  
եւ խոշոր շրթունք, դուրս ցցուած այտեր, խո-  
րունկ աչքեր, դէպ իետեւ ցցուած ճակատ,  
տափակ քիթ, գանդուր, ուեւ եւ խիտ մազեր,  
թխագոյն մորթ։

Սոքա կը բնակին կեդրոնական եւ հարաւա-  
յին Ափրիկէ։

Հ. Ո՞յք են Ամերիկեանք եւ ո՞ւր կը բնա-  
կին։

Պ. Ամերիկացիք են Ամերիկայի բնիկները  
ունին պղնձագոյն մորթ, երկայն եւ գեղեցիկ  
հասակ, մեծ զլուխ, մանր աչքեր, ցանցառ  
մազեր։ Վերջապէս գլխէն զատ մարմնոյն մնա-

ցեալ մասերը գեղեցիկ կերպով կազմուած է:  
Ամերիկացիք կը բնակին ընդհանրապէս Ամե-  
րիկայի խոպան եւ վայրի կողմերը:

Հ. Ոյք են Մալայեանք եւ ուր կը բնակին:

Պ. Մալայեանք կամ Գորշագոյնք՝ Մոնկոլ-  
եան եւ Եթովպեան կազմութեան խառնուրդ  
մը կը ներկայացնեն:

Ասոնք կը բնակին Ովկիանոսի կղզիները, ՚ի  
մասնաւորի Մալաքաս եւ շրջակայ կղզիները  
ուստից առած են իրենց անունը:

Հ. Վերոյիշեալ ցեղերը հաւասարապէս կը  
յառաջադիմեն:

Պ. Թէեւ Կովկասեան ցեղը միշտ կը յառա-  
ջադիմէ եւ ամէն օր իւր թիւը կը շատնայ,  
իսկ ընդհակառակն միւս ցեղերը կամ ազգե-  
րը որք տգիտութեան մէջ խորասուզուած են  
հետզետէ կը կորնչին այնպէս որ իւրեանց  
թիւը այժմ մեծապէս նուազած է:

### ԳԼՈՒԽ Պ.

### ՈՍԿՈՐՏԻՔ

Հ. Ի՞նչ են Ոսկորտիք:

Պ. Ոսկորտիք այսինքն՝ Ոսկրային դրու-

թիւնը մարդկային մարմնոյ հաստատութիւն և  
շարժմանց ապահովութիւն տուող հաստա-  
տուն եւ պինդ ճերմակ մարմններ են՝ որոց  
ամբողջութիւնը կը կոչուի Կմախի:

Հ. Կմախաքը քանի մասմանց կը բաժնուի:

Պ. Ինչպէս մարմնոյն արտաքին մասը նոյն-  
պէս եւ կմախաքը երեք մասանց կը բաժնուի 1°  
Ոսկորտիք զիսոյ, 2° Ոսկորտիք իրանի եւ 3°  
Ոսկորտիք անդամոց:

### Ա. ՈՍԿՈՐՏԻՔ ԳԼՈՒԽ

Հ. Գլխային ոսկորտիքը քանի խումբի կը  
բաժնուի:


Պ. Գլխային ոսկորտիքը երկու խումբի կը  
բաժնուի 1° Գանկային ոսկերֆ եւ 2° Դիմա-  
կան ոսկերֆ:

Հ. Գանկային ոսկերք քանի հատ եւ ո-  
րոնք են:

Պ. Գանկային ոսկերք ութը հատ են եւ  
են հետեւեալք. 1 ձակատային, 2 Կողմնա-  
յին, 2 Քունական, 1 Սնարական, 1 Մա-  
ղակերպ և 1 Սեպակերպ:

Հ. Այս ոսկորտիքը լիչով միմեանց հետ  
միացած են:

Պ. Վերոյիշեալ ոսկերք ընդհանրապէս իրա-  
րու հետ միացած են կարանի (Այսէթք) ձեւով:



1, 1, 2, 3, 3, Գանկին ոսկերքը միացնող կարանք :

Հ. Դիմական ոսկերքը քանի հատ եւ ո-  
րոնք են :

Պ. Դիմական ոսկերքը տասն եւ չորս հատ  
են որոց գլխաւորք հետեւեալքն են. 2 Ռնգա-  
կանի, 1 Խոփ, 2 Այտականի, 2 Քմականի, 2  
Վերին կզակայինի, 1 Սուրին կզակայինի, 2  
Մրտասուականի և 2 Սուրին եղջիւր :

Հ. Վերոյիշեալ ոսկորներէ զատ ուրիշներ  
աւ կը դանո՞ւին զվառն մէջ :


Պ. Յիշեալ ոսկորներէ զատ գլխուն մէջ կը  
դանուին ինը ոսկերք աւ, որոց ութը ականջ-  
ներուն մէջ. իւրաքանչյուր ականջի մէջ չորսա-  
կան հատ, եւ մէկ սոկու մ' աւ լեզուն ետեւը  
կը դանուի եւ կըսուի երկճիղ լեզուկր :

Հ. Գլխային ոսկերքը շարժուն են:

Պ. Գլխուն ոսկերքաց մէջ միայն սասորին կը-  
զակը շարժական է, իսկ միւսները անշարժ :

Հ. Կզակները ի՞նչով կը վերջանան :

Պ. Կզակաց մէջ հաստատուած կը դանուին  
Ակուայիները որ կիսու ած վայլուն նիւթով ծած-  
կու ած պինդ սոկորներ են :



1, 2, Հեծատամունք : 3 Շնատամունք : 4, 5, Փոքր աղօրիք :  
7, 8, Մեծ աղօրիք :

Հ. Ակռայքը քանի մասէ բաղկացեալ են :

Պ. Ակռայքը երեք որոշ մասներ կը ներկայա-  
ցընեն : Կզակին մէջ մասած մասը Արմատ կը  
կոչուի, իսկ լինդերէն գուրս ցցուած մասը  
կ'ըսուի Պատկ, պատկին եւ որմատին մէջտե-  
ղի մասը կ'ըսուի Արմու :

Հ. Ակուայք քանի տեսակ են :

Պ. Ակուայները երեք տեսակ են՝ սրբ կ'ըս-  
ուին Հերձամունք, Շնատամունք, Լեսատ-  
մունք կամ՝ Այօրիի:

Հ. Հերձատամունքը ո՞րոնք են :

Պ. Հերձատամունքը որք Հերձանք ալ կը կո-  
չուին մեր կղակին առջեւի ակուայներն են, ո-  
րոց բերանը սուր եւ ուրագի բերնի ձեւով է,  
իւրեանց արմատը մէկ է եւ կոնաձեւ :

Հ. Շնատամունքը ո՞րոնք են :

Պ. Շնատամունքը որ Կէռիի կամ՝ Ժանիի  
ալ կոչուին, հեւաններուն քով կը գանուին  
և ասոնց պատկը սուր և կոնաձեւ է, արմատը  
եւս մէկ և կոնաձեւ է :

Հ. Լեսատամունքը ո՞րոնք են :

Պ. Լեսատամունքը կամ՝ ազօրիքները բեր-  
նին ետեւի կողմը կը գանուին, ասոնց պատկը  
տափարակ և խորտուբորթ է, արմատը 4—4  
հատ կընայ ըլլալ:

Հ. Ակուայից պաշտօնը ի՞նչ է :

Պ. Ակուայներուն պաշտօնն է կերտկուըը  
ծամել և կարելի եղածին չափ զանոնք փշը բ-  
մարսողութիւնը դիւրացնելու համար, ասկէ  
ի զատ ձայնի օգնել, նաև բառեր եւ գրեր  
յստակ հնչելու, եայլն :

Հ. Իւրաքանչիւր ակուայի պաշտօնը մէկ է :

Պ. Ոչ. Հեւանները կը ծառայեն մննդարար  
նիւթեր ծամելու, շնակուանները՝ պատառելու  
և ազօրիքները՝ փշը բ-լու :

Հ. Ակուայք քանի անդամ կը փոխուին :

Պ. Մարդկանց ակուայները երկու անդամ  
կը բուսնին, առջի բուսման ակուայները կ'ըս-  
ուին Կաթի կամ Ժամանակաւոր ակուայներ  
որք կը բուսնին երբ մանկիկը 6—7 ամսուան  
ըլլայ և կը ժափին երբ մանուկը վեցերորդ  
տարին լրացնէ :

Հ. Կաթի ակուայք քանի՞օ հատ են :

Պ. Այս ակուայներուն թիւը քսան է, որոց  
ութը հատը հեւան (չորս հատը վերի կղակին  
առջեւի կողմը, չորս հատը ստորին կղակին  
առջեւի կողմը). չորս հատ շնական (իւրաքան-  
չիւր կղակի վրայ երկու հատ, մին հեւաննե-  
րուն ձախ կողմը և միւսը՝ աջ կողմը). իսկ մնաց-  
եալ ութը հատը ազօրիք են (չորս հատ վերի  
կղակին վրայ, չորս ստորին կղակին վրայ, իւ-  
րաքանչիւր կողմը երկուքական) :

Հ. Կաթի ակուայից ո՞րոնք կը յաջորդեն և  
քանի՞օ հատ են :

Պ. Կաթի ակուայներուն կը յաջորդեն երկ-  
րորդ բուսման կամ Տեւողական ակուայները,  
որոց թիւը երեսուն երկու է. ութը հեւան,  
չորս շնական ընդ առաջնոյն կարգագրուած.

քսան հատ աղօրիք, իւրաքանչիւր կղակին վրայ տառը հատ, իւրաքանչիւր կողմը հինգտկան դրուած:

Հ. Ի՞նչ խնամք պարտմք ունենալ ակռայից առողջութեան համար:

Պ. Ակռայները պէտք է խիստ մաքուր պահել, եթէ ոչ հիւանդութիւններ յառաջ կուգան: Մաքուր պահելու համար ամէն առաւտու և յետ կերակրոյ զանանք մաքրելու է: Նա մանաւանդ զգուշանալու է երբէք թթու շատ գործածելէ, նոյն իսկ ակռայ մաքրող շատ մը փոշիներէ՝ որոց մէջ գտնուած նիւթերը ակռային փատելուն պատճառ կ'ըլլան: Սեաւ և աղսոտ ակռաները մաքրելու ամենէն օդտակար եւ անվնաս նիւթն է թմբոյ (օֆլանուք) կեղեւի ածուխի փոշին:

#### Բ. ՈՍԿՈՐՏԻՔ ԻՐԱՆԻ

Հ. Իրանը ի՞նչ կը պարունակէ:


Պ. Իրանը կը պարունակէ ուսերը որոց իւրաքանչիւրն ես կը պարունակէ երկու սոկը 1<sup>o</sup> Անրակ և 2<sup>o</sup> Թիակ:

Հ. Որու կըսուի անրակ և թիակ:

Պ. Անրակը՝ կուրծքին սոկը որ Լանցոսկր կ'ըսուի, բազուկին հետ միացնող սոկըն է, իսկ թիակը՝ ետեւի կողմը կը գտնուի դուրս ցըց-

ուած մասովը: Իրանին, նա մանաւանդ ամբողջ մարմնոյն ամենէն կարեւոր մասն է Աղնայարը:

Ա.



Բ.



Ա. 8, 9, Զսոսկեր (6) եւ ազբեր 5 կապերը:


Բ. Թիակին (4) եւ անրակին (3) կապերը: 5, 4, Անրակին եւ բազկին կապերը:

Հ. Ի՞նչ է ողնայարը:

Պ. Աղնայար կ'ըսուի մանր սոկըներէ ձեւացած սիւն մը, որ գանկէն մինչև իրանին վարի կողմը կ'երկննայ:

Հ. Աղնայարը ձեւացնող սոկերը ի՞նչ կը կոչուին և ի՞նչպէս իրարու միայած են:

Պ. Աղնայարը ձեւացնող մանր սոկըները Աղունիք կ'ըսուին: Իւրաքանչիւր ողն ունի մէջտեղը ծակ մը և եօթը Եղուս (Դաւրս ցցուած մասեր): Աղունք իրարու վրայ գլուելով իրենց



4, 2, 3, Լանջոսկը : 4, 5, Ողնայարի սիլին : 6, 7, 8, 9. Առաջին կող : 10 Եօթեներդ կող : 11, Երրորդ կողին անառը : 12 Շարժմական կողերը :

**Ճակերլը իրալու վրայ կուգան և կը կազմեն  
խողովակ մը և քովստի երկու փոքրիկ ծակեր  
կը թողուն։ Խողովակին մէջ կը պահպանուի  
Ողմածուծը, իսկ քովստի ծակերէն ջղեր դուրս  
կ'ելլեն։**


Հ. Ողնայիւրը քանի՞ մասանց կը բաժնուի :

Պ. Ամբողջ ողնայարը հինգ մասի կը բաժ-  
նուի. Վերի մասը կ'ըսուի Ծոծրակային և կը  
պարունակէ եօթը ողունք, երկրպարտ մասը  
կ'ըսուի Թիկնային որ տասն և երկու ողունք

պարունակէ, ասոր կը յաջորդէ Միջային  
ասը որ կը բաղկանայ հինգ ողունքներէ եւ  
վերջապէս միջային մասին կը յաջորդէ Մրա-  
նական և Կկուական ստորին մասերը, որոց  
մին չուրա՞ և միւսն երեք ողունք կը պարունա-  
կեն: Կարելի է նաև զատոնք հինգական ալ-  
հաշուել:

Հ. Թիկնային ողունքներուն ստորաբաժան-  
մունքը ո՞յլ են :

Պ. Թիկնային 12 ողօւնքներուն իւրաքանչիւրն ունի զցյդ մը աղեղնաձև կողմ կոչուած սակմեր, որը ելիու մասի կը բաժնուին՝ Սույգ և Կեղծ կոզեր:



4, 4, Զատուկիր: 2, Սաքրում, (4) որոյ վերայ (e) կը կենայ ողբայարի սիւնը. 3, Աղնայարի սեան ծայրը. 4, 4, Բաժակներ:

Հ. Որո՞նք են ստորև և կլիք կողերը:

Պ. Վերին եօթը զգալ բնուածութ կող կըս-

ուին . կը միայնեն լանջոսկրը ողնայարին հետ  
և կը կազմեն Լանջական վանդակ ըսուածը ,  
յորում կը գտնուին կենդանւոյն աղնուագոյն  
մասերը (սիրտ, թոքք) : Իսկ մնացեալ հինգ ստո-  
րին զայգը կեղծ կող կը կոչուին որովհետև մինչեւ<sup>ւ</sup>  
առջեւ չեն կրնար երկնաւալ լանջոսկեր հետ  
միանալու , և հետեւապէս անջատ կը մնան :

Հ . Իրանը ուրիշ ի՞նչ ոսկը կը պարունակէ :

Պ . Իրանին ոսկըներուն մաս կը կազմէ նաև  
կոնֆը , որ երեք մասէ կը բաղկանայ . 1<sup>o</sup> Կուշ-  
ուկր , 2<sup>o</sup> Յայլուկր եւ 3<sup>o</sup> Զատուկր :

Կուշառոսկրը կը ներկայացնէ վարի կողմը  
Որոթ ըսուած փոս մը ուր կը մտնէ աղդոսկեր  
գլուխը :

#### Գ . ՈՍԿՈՐՏԻՔ ԱՆԴԱՄՈՑ

Հ . Անդամը քանի՞ են :

Պ . Չորս , երկու՝ ստորին եւ երկու՝ վերին :  
Երկու վերին անդամը իրարու ինչպէս նաև եր-  
կու ստորին անդամը ալ իրարու բոլորովին  
նմանապէս շինուած են , որով միոյն նկարա-  
գրութիւնը միւսին ալ կը բաւէ :


Հ . Վերին անդամը քանի՞ մասի կը բաժնուի :

Պ . Վերին անդամը երեք մասի կը բաժնուի .  
բաղուկ , ծղի և ձեռն :

Հ . Ո՞յք են սոցա բաժանմունք :

Պ . Բազուկը միմիայն մի ոսկըէ կը բաղկա-

նայ և կ'ըսուի Բազկոսկր . իսկ ծղին կը բաղ-  
կանայ երկու ոսկըներէ . 1<sup>o</sup> Շառարդոսկր եւ  
2<sup>o</sup> Ծղոսկր . վերջապէս ձեռքը երեք մասանց  
կը բաժնուի որք են , 1<sup>o</sup> Դաստակ , 2<sup>o</sup> Ավի և  
3<sup>o</sup> Մատումել :



10 , 10 , 10 , Ավին ոսկրները : 11 , 12 , 13 , Մատումե-  
լու ոսկրները : 14 , 15 , Բրամատին ոսկրները :

Հ . Ի՞նչ են դաստակի , ափի եւ մատանց  
ստորաբաժանմունք :

Պ . Դաստակը 8 ոսկըներէ կը բաղկանայ ,  
ափը՝ հինգ , իսկ մատանց իւրաքանչիւրը բաց ի  
բթամատէն՝ (որ միայն երկու ոսկը կը պարու-  
նակէ) կը բաղկանան երեք ոսկըներէ որ Ան-  
դումել կը կոչուին :

Հ . Ստորին անդամը քանի՞ մասանց կ'բաժնուի :

Պ. Ստորին անդամը վերին անդամից նման երեք մասերու կը բաժնուի որք են. ազդը, պրոնեք և ստի:



Ծնկան յօդուածք: 1, Ազդուկր: 3, Ծնկուկր: 5, Ոլոֆ, 2, 4, Ծնկուկրէ կապերը. 6, Ոլոփին ահառք: 12, Ազդրին ահառք:

### Հ. Ոյք են սոցա բաժանմունք:

Պ. Ազդը միայն մի ոսկրէ կը բաղկանայ որ Ազդուկր կ'ըսուի: Սրունքը երկու ոսկրներ կը պարունակէ որք են. 1<sup>o</sup> Ոլոփ եւ 2<sup>o</sup> Լիսեռնուկր. սրունքին եւ ազդեր մէջտեղ կը գըտնուի կողովից ըսուած կլոր ոսկրը որ կ'ըսուի նաեւ ծնկան ոսկր, եւ վերջապէս ոտքը երեք մասերու կը բաժնուի՝ 1<sup>o</sup> Վերնաթաթ, 2<sup>o</sup> Թաթ եւ 3<sup>o</sup> Մատունի:

Հ. Ի՞նչ են վերնաթաթի, թաթի եւ մատանց ստորաբաժանմունք:

Պ. Վերնաթաթը եօթն ոսկր կը պարունակէ ոլոց դլսաւորներն են կրնկան ոսկր եւ


վէգ. թաթը հինգ ոսկր կը պարունակէ, իսկ մատերը տասն եւ չորս ստեղունքներէ կը բաղկանան, երկու ոսկր բթամատը՝ իսկ միւսները երեքական:




1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, Ոսին վերի եւեսին ձեւը: 10, 11, Ոսին բբամատին ուկրները: 12, 13, 14, Ոսին նրկոյթներուն (փոքր մատերուն) ուկրները:

Հ. Կմախլքին ամբողջ ոսկերաց թիւն ի՞նչ է:

Պ. Կմախլքին ամբողջ ոսկերաց թիւն հաստատուն չ'է սակայն եւ այնպէս միշտ երկու հարիւրէն աւելի է: Այս թուոյն փոփոխու-



Ոսին ձեւը որ անոր աղեղնաձեւ ըլլալը կը ցացնէ. Ազեղը կը կենայ զարավարին եւ մատերուն վայ. 1, Ոլոփին վարի մասը. 2, 3, 4, 5, 6, Ոսին մէջտեղի ուկրները. 7, 8, Բբամատին ուկրները:



1, 4, Աղճայարի սինէր : 2, Գանկի : 3, վարի ծնօսր : 4, Լանջուկր : 5, Կողեր : 6, 6, Կողերուն անառներ : 7, Ան-  
րակ : 8, Բազկուլր : 9, Ուսիր յօդուածք : 10, Շառաւաղոսուկր.  
11, Արմկուլր : 12, Արմկան յօդուածք : 13, Գաստակ : 14,  
Զենք : 15, Հասուկր : 16, Կոնիի ոսկր : 17, Զափի յօդուածք :  
18, Ազդր : 19, Ծնկան ոսկր : 20, Ծնկան յօդուածք : 21, Մրու-  
ից բարակ ոսկր : 22, Ոլք : 23, Ուժի կոնդին յօդուածք :  
24, Ուժ : 25, 26, Անարակ, Լանջուկր եւ կողերու կապեր :  
27, 28, 29, Ուսիմ, արմկան եւ դաստակի կապեր : 30, Բազկին  
շնչերականը (բազ). 31, Զափի յօդուածքին կապեր : 32, 33, Մրու-  
ից շնչերականը : 34, 35, 36, Ծնկան եւ ուժի կոնդին կապեր :

թիւնը յառաջ կ'ուգայ տարեաց յառաջանալո-  
վը, վասն զի ոսկր մը, օրինակի աղագաւ լան-  
ջոսկրը՝ մինչդեռ մահկութեան տառեն մէկ քա-  
նի մասերէ կը բաղկանայ, ամաց յառաջանա-  
լովը հետզհետէ այդ մասերը իրարու հետ կը  
միանան եւ ի մի կը ձաւլին.

Հ. Ամբողջ կմախքը ի՞նչ կը կշռէ :

Պ. Չորսէն մինչեւ վեց քիլօկրամ կը կշռէ :

Գլոկիլ Պ.

### ՄԿՈՒՆՔ ԿԱՄ ԴՆԴԵՐՔ

Հ. Ի՞նչ են դնդերք :

Պ. Դնդերքը բարակ թելերէ բաղկացեալ  
մարմիններ են որք հասարակ լեզուաւ միս կը  
կոչուին. միսը կարմիր է արեան գունով, ա-  
ռանց արեան՝ միսը (դնդերք) կարմիր չէ, այլ  
գեղինի վրայ ճերմակ : Եղան եփած մախն թե-  
լերը որոշ կը տեսնուին:

Հ. Դնդերք ի՞նչ բանի կը ձառայեն :

Պ. Ուկորնները մարմնոյն ընդհանուր ձեւը  
կուտան եւ շարժման ատեն հաստատման կը  
ծառայեն, իսկ շարժման ծառայող մասերն  
են դնդերք եւ ջիզք :

Հ. Դնդերք միշտ միեւնոյն ձեւն ունին :

Պ. Դնդերները երբեմն լաթի կերպարանք կ'առնուն, երբեմն իլաձեւ՝ (այսինքն մէջտեղը հաստ, երկու ծայրը բարակ), երբեմն դլանաձեւ՝ եւայլն. բազկին մաերը իլաձեւ են :

Ա. Բ.



Ա. Ուղիղ մանրաթիթէ կազմուած մկանունք : Բ. Հովանարի ձեւ ունեցող վկանունք : Ըստ Մկանանց ծայրերու ձգանքը :

Հ. Դնդերց պաշտօնը նոյն է :

Պ. Դնդերք զանազան պաշտօն կը վարեն. ոմանք մարմինը տարածելու, այլք ծռելու եւ այլն. Ոմանք նոյն շարժումը կը կատարեն եւ կ'ըսուին Համաշարժ դնդերք, իսկ ոմանք հակառակ շարժում կը նեն եւ կ'ըսուին Հակաշարժք: Դնդերներէն ոմանք կամքին կը հնազանդին և կ'ըսուին կամաշարժ. օրինակ անդամոց մաերը: Այլք կը հնազանդին միայն կեանքին եւ յայնժամ միայն կը դադարին դոր-

ծելէ երբ կեանքը դադարի եւ կ'ըսուին Ակամաշարժ. օրինակ սիրտը, որ երբէք մեր կամացը հաճոյական խաղալիք մը չ'կրնար ըլլալ:

Կան մկունքներ որք թէպէտեւ կեանքէն կախում ունին բայց կամաց ալ կը հնազանդին. օրինակ թոքը, որ չնչողութեան կը ծառայէ, կրնայ ըստ մեր կամաց արագ կամ դանդաղ դործել:

Հ. Մկունք բնչով եւ որու կը միանան :

Պ. Մկունք ոսկերց հետ Յօդակապ ըսուած լարերով կը միանան :


Հ. Դնդերց շարժումը միշտ նոյնն է :

Պ. Մկունքներէն ոմանք երբեմն կը քաշուին եւ բոլորովին հակառակ շարժումներ կը կատարեն և կ'ըսուին կծկեալ, իսկ երեւոյթը՝ կծկումն: Երբեմն ալ մկունք բոլորովին կը դադարին դործելէ և կերպով մը կը մեռանին և հիւանդութիւնը կ'ըսուի Անդամաշուծութիւն:


Հ. Դնդերք որոշ թիւ մ' ունին :

Պ. Թէկ մկանանց թիւը որոշ չ'է, այլ ընդամենը գրեթէ վեց հարիւրի շափ ըլլալ կը կարծուի:





Առաջակողման ամբողջ մկունքը ցուցնող պատկեր մը :



Ցեսակողման ամբողջ մկունքը ցուցնող պատկեր մը :

ԳԼՈՒԽ Ե.

ԶՂԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ի՞նչ է ջղային գրութիւնը :

Պ. Ջղային դրութիւնը որ մկանանց շարժում տուող մասն է կապոյա, գեղնադոյն սպիտակ և կամ բոլորովին սպիտակ նիւթերէ ձեւացած հիւսուած մ'է, որ զանազան ձեւերով կը ներկայանայ. թելերու ձեւով օրինակ ջղերը, գընդաձեւ՝ օրինակ ուղեղը :

Հ. Ջղային գրութիւնը քանի մասի կը բաժնուի :

Պ. Ամբողջ ջղային գրութիւնը կը բաժնուի երկու մասի. կերրոնական մաս և Երգանական մաս :

Հ. Ո՞րն է կեդրոնական մասը :

Պ. Կեդրոնական մասն այն է որ կը պարունակէ Ռողեղը, Ռողղակը, Երկայնածուծը, Ողածուծը եւ այլ երկրորդական մասեր :

Հ. Ջղային գրութեան կեդրոնական մասը ո՞ւր կը գտնուի :

Պ. Կեդրոնական մասը այսինքն ուղեղը, ուղղակը, երկայնածուծը ինչպէս նաեւ ողնածուծին վերի վարը մէկ մասը ամիսի-

ուած եւ պաշտպանուած են գանկին մէջ :

Հ. Ուղեղը քանի թաղանթով ծածկուած է :  
Պ. Ուղեղը երեք թաղանթով ծածկուած է : Արտաքին թաղանթը որ հաստ եւ կարծը է, կը կոչուի Խատենի, միջին թաղանթը որ սակաւ ինչ բարակ եւ սարգի ստայնի նման է կը կոչուի Սարդուտենի. իսկ ներքին թաղանթը որ արեան անօթներէ շինուած է ցանցակերպ կը կոչուի Գորովենի կամ Գորովամայր :

Հ. Ի՞նչ է Խստենւոյն պաշտօնը :

Պ. Խստենին կամ Խստամայրը ուղղակը ուղեղէն կը զատէ, նաեւ ուղեղին և ուղղակին մէջտեղը ծալքեր կը կազմէ որք զայն կը կիսեն եւ կը կազմեն կխստագունդեր :

Հ. Ի՞նչ է ուղեղը :


Պ. Ուղեղն որ կակու մեծ զանգուածէ մը ձեւացած է, է գործարան մտաց եւ կեդրոն զգայութեանց եւ շարժմանց :

Հ. Ուղեղը ո՞ւր կը գտնուի :

Պ. Գլխուն վերի կողմը կը գտնուի գէպ ի առջեւ :

Հ. Խստենին ուղեղին վրայ ի՞նչ ծալքեր կը ձեւացնէ, եւ զայն քանի մասի կը բաժնէ :

Պ. Խստենին ուղեղին վրայ մանը ծալքեր ձեւացնելով խորառութիւններ կը կազմէ, որք Մանուած ուղեղի կլաստին, որոց մեծ կա-



Ա, ա, Գանկին վար դարձուած մորբը : ի, ի, ի, Գանկու կեր ծայրը : է, Ուղեղին վեր առնուած քաղաքնը : գ, Ուղեղի ծալք :

Իսրեւորութիւն կուտան ումանք ի բնախօսից : Խորոշութիւն կուտան ումանք ի բնախօսից : Խորոշութիւն կուտան ումանք ի բնախօսից :

Հ. Ի՞նչ է ուղղակը :

Պ. Ուղղակը՝ մակերեւոյթը ողորկ, այսինքն խորոշութորդ չեղող փաթիկ ուղեղ մ' է :


Հ. Ուղղակը ուր կը գտնուի :

Պ. Ուղղակը գլխուն ետեւի եւ ստորին կող-

մը կը գտնուի : Սա եւս ուղեղի նման երկու կիսազունդերու կը բաժնուի :

Հ. Ուղղակին մէջ ի՞նչ կը գտնուի :

Պ. Ուղղակին մէջ կը գտնուի ծառի ձեռվ մարմին մը որ ծառ կենաց կը կոչուի : Սայաչս վաղեմի բնախօսից մեծ կարեւորութիւն ունէր :




1, Մեծ ուղեղ : 2, Փոքր ուղեղ, որոյ եւեւորը կը նմանի կենաց ծառին : 3, Ուղածութին վերի մասը : 4, Ուղածուծ : 6, Զղերուն առաջին զոյզը, այսինքն նոտոպորեան զիղը : 7, Երկրորդ զոյզը, այսինքն տեսութեան զիղը : 9, 10, 12, Երրորդ, չորրորդ եւ վեցերորդ զոյզերը, որ աչաց մկանանց կ'անցնին : 11, Հինգերորդ զոյզը կամ նաւակելեաց զիղը : 13, Եօրեներորդ զոյզը որ եւեսին մկանանց կ'անցնին : 14, Ուրենորդ զոյզը, կամ լսելեաց զիղը : 15, 16, 18, 19, Իններորդ տասներորդ, մետասամերորդ եւ եւլուսասամերորդ զոյզերը, որ լեզուին, հազարին եւ վզին կ'անցնին : 20, Երկու ողնայարի զիղեր :

Հ. Ի՞նչ է ողնածուծը եւ ի՞նչ ջիղերու ծագում կուտայ:

Պ. Ողնածուծը ջղային երկայն լար մ' է ողնայարին մէջ ամփոփեալ: Ողնածուծը իւրաքանչիւր ողին կողմնակի ծակերէն դուրս կուտայ զոյգ մը ջիղ, որոց թիւը երեսուն եւ մէկ զոյգ է, որոց վրայ աւելցնելով ուղեղէն ծագում առած տասն եւ երկու զոյգերն ալ կը լայ ընդամենը քառասուն եւ երեք զոյգ:

Հ. Զղային դրութեան պաշտօնն ինչ է:

Պ. Զղային դրութեանց այս իւրաքանչիւր մասերը իւրեանց յատկացեալ պաշտօնն ունին. ինչպէս ուղեղը է կեդրոն իմացականութեան, զգայութեանց եւ շարժմանց. ուղղակը է շարժմանց զեկը, վասնզի ուղղակին մէկ կողմի կիսագունդը եթէ կտրեմք կենդանին կը թաւալի կտրած կողմին վրայ, իսկ եթէ ամբողջ ուղղակը կտրեմք հանեմք, կենդանին ետեւի վրայ կը թաւալի. ողնածուծը իւր ջղերովը կը ծառայէ գլխաւորաբար մարտարական կամ՝ թէ սննդական և բաղմասերական գործողութեանց. իսկ երկայնածուծը որ ուղեղին եւ ուղղակին տակը կը գանուի, ունի իւր մէջ կէտ մը զոր ֆլուիրԱՆՑ չանգոյց կենաց կը կոչէ, վասնզի ամենափոքրիկ կերպով եթէ այդ կէտը հարուածի, իսկոյն կենդանին կը մեռնի:



1, Մեծ ուղեղ: 2, Փոքր ուղեղ (ուղղակ): 3, Ողնածուծ: 4, Երեսի ջիղերը: 6, 7, 8, 9, Բազկին ջիղերը: 13, 14, 15, 16, Վարի անդամներուն ջիղերը:

ԳԼՈՒԽ Զ.

ԶԳԱՅՈՒԹԻՒՆՔ

Հ. Ի՞նչ է զգայականութիւն :

Պ. Զգայականութիւնն է այն յատկութիւնը որով կենդանին արտաքին առարկայից տպաւորութիւնն է լընդունի : Իսկ Զգայութիւնն է լընդունի արտաքին առարկայից մեր վերայ ներգործած տպաւորութիւնը :

Հ. Ի՞նչ են զգայարանը :

Պ. Զգայարանի զգայութեանց համար մասնաւոր գործարաններ են :

Հ. Ի՞նչպէս կը կատարուի զգայութիւնն :

Պ. Որ եւ է արտաքին առարկայի մը տպաւորութիւնը նախ կ'ամփոփուի զգայարանաց միոյն մէջ եւ այդ զգայարանքին մէջ վերջացող ջղոյն միջոցաւ կը հաղորդի ուղեղին, որ զայն կը ներկայացնէ հոգւոյն իբրեւ պատկեր տպաւորով առարկային. այս գործողութեան մէջ ո՛չ զգայարանքը եւ ո՛չ ջիղը կ'իմանան ինչ որ ուղեղին կը հաղորդուին, նման հեռագրական մետաղեայ գործիքին եւ մետաղեայ թերթին, որք լուր կը հաղորդեն առանց տեղեկութիւն ընելու ինչ որ կ'ընեն :

Հ. Զգայարանը քանիք են :

Պ. Հինգ են . 1<sup>0</sup> Շօսափելիք, 2<sup>0</sup> Հոսոսելիք, 3<sup>0</sup> Ճաշակելիք, 4<sup>0</sup> Լսելիք եւ 5<sup>0</sup> Տեսանելիք :

1<sup>0</sup> ՇՕՇԱՓԵԼԻՔ

Հ. Ի՞նչ է շօշափելեաց զգայարանը :

Պ. Զգայարանաց ամենէն ընդհանրականը եւ ամենէն անհրաժեշտն է շօշափելիք, որոց միջոցաւ կարող կ'ըլլամբ իմանալ տաքութիւն, պաշտութիւն, պիդութիւն, կակղութիւն և այլն :

Հ. Ո՞րն է շօշափելեաց գործարանը :


Պ. Շօշափելեաց գործարանն է մորթը, որ մեր ամբողջ մարմինը կը ծածկէ :

Հ. Մորթը քանի խաւէ կը բաղկանայ :

Պ. Մորթը երկու խաւէ կը բաղկանայ, արտաքին խաւը որ վերնամաշկ կ'ըսուի բնաւ ըզգայութեան պաշտօն չ'ունի, այլ պարզապէս կը պաշտպանէ ներքին խաւը որ կ'ըսուի Մաշկ. սա միայն զգայութեան կը ծառայէ :

Հ. Մաշկին եւ վերնամաշկին վրայ ի՞նչ կը գտնուին :

Պ. Մաշկին վրայ կը գտնուին Պակունիք ըսուած գուրս ցցուեալ բշտիկներ, որոց մէջ կը վերջանայ շօշափումը ընդունող ջիղերուն ծայրերը. իսկ վերնամաշկին վրայ կը գտնուին



4, 4, 4, 2, 2, 2, 2, Վերնամասկին արտամին երեսոյքը : Վերնամասկին ներփին մասը : 4, 4, Վերնամասկին գունաւոր մասը : 5, 5, Մասկ : 6, 6, 6, 6, 6, Պտկունին : 9, 9, Խղով լեցուած խորշեր : 12, Երկու մազ : 13, Արտաճշական զեղձ մը ու անոր խնդուակը :

պտկանց համապատասխանող ծակտիկներ ուստից գուրս կը ծօրէ քրտինքը :

**Հ.** Մորթին ամէն կողմը հաւասարապէս զգայոնն է :

**Պ.** Մարդուս մորթին ամէն կողմը հաւասարապէս զգայուն չ'է, զոր օրինակ, ամենէն ըզդայուն կողմն է իւր ձեռաց մատանց ծայրերը, որք Պտեղութիւն կը կոչուին, և շրթունքները՝ ուրովհետեւ հոն ջղային մանրաթերք աւելի շատ են եւ մեծ : Վերնամասկը որչափ որ բարակ ըլ-

լայ, այնչափ առաւել զդայուն կ'ըլլայ մորթը : Թարթնոց, կօչկակարաց, մեքենագործաց եւ այլոց ձեռքը աշխատութեամբ բթացած է, զի վերնամասկնին հաստըցած է :

**Հ.** Վերնամասկը փոփոխման ենթակայ է :

**Պ.** Կենդանեաց վերնամասկը շարունակ փոփոխման ենթակայ է. մարդկան վերնամասկը աղտի փոխուելով կը թափի, ձկանցը՝ թէփի ձեւով կ'իյնայ. իսկ օձինը՝ ամբովզ իւր մարմնոյն ձեւովը կ'իյնայ, որ կ'ըսուի օձու շապիկ :

**Հ.** Մորթը մաքուր պահելու համար ի՞նչ ընելու է :

**Պ.** Հարկ անհրաժեշտ է ստէպ լուացուիլ մանաւանդ. մորթը շփելով, որպէս զի աղտով ծածկուած ծակտիքը բացուին. Աւելորդ է ըսել թէ մորթի անմաքրութենէ յառաջ կ'ուզան ծանը հիւանդութիւններ :

### ՀՈՏՈՏԵԼԻՔ

**Հ.** Ի՞նչ է հոտառութիւնը :

**Պ.** Հոտառութիւնն՝ հոտառէտ մարմնոց մասնիկներուն, կաղերուն եւ կամ՝ շոգւոյն ուրնգաց մէջի հեղուկն հետ խառնուելով՝ միեւնոյն հեղուկին մէջ գտնուած հոտ առնող ջղերը գրգռեն է, հոտառէտ մարմնները պէտք է կաղային ըլլան, թէ որ հեղուկ են պէտք է


շոգի արտադրեն, իսկ թէ որ հաստատուն՝  
մանր մասնիկներ պէտք է արտադրեն:

Հ. Հոտառութիւնը ի՞նչպէս կը կատար-  
ուի:

Պ. Երբ նիւթ մը քթին գէմ կը բռնուի,  
ուռնգերէն անյնող օդը կը ատանի այդ նիւ-  
թին հոտաւէտ մասերը հոտառութեան ջիղին  
մանրաթելերուն, եւ այս տպաւորութիւնը կը  
հազորդուի ուղեղին:

Հ. Ո՞րն է հստոտելեաց գործարանը :

Պ. Հոտ առնելու գործարանն է Քիթը որ  
Անգական, Այտական և այլ սովորներէ ձեւա-  
ցած խոռոշ մ' է :



4. Հոտառութեան ջիղը : 5. Անոր սորութամբաներ :

Հ. Քիթը քանի մասի կը բաժնուի:

Պ. Քիթը Խոփին միջոցաւ երկուքի կը բաժ-  
նուի, որք կը սուլին Քթափոխիք. Քթափոխից

ետեւի ծակերը կը վերջանան բերնին ետեւի  
կողմը:

Հ. Ոնդաց հեղուկը ուստի կը գոյանայ:

Պ. Ոնդաց հեղուկը որ Խլիմի կը կոչուի կը  
դայանաց քթին թաղանթին մէջ գանուած մանր  
գործարաններէ որ Գեղճի կը կոչուին :

Հ. Խլիմը պաշտօնն ի՞նչ է :

Պ. Խլիմը ոնդաց թաղանթին վրայ թա-  
փուելով անդադար, հոտառութեան ջղին փա-  
փուկ մանրաթելերը կը պաշտպանէ օդէն եւ  
սուր եւ գառն հոտերէ: Ոյդ հեղուկին նուա-  
զումը կամ չափազանց յաւելումը հոտառու-  
թեան կը վնասեն: ասոր համար է որ հարբու-  
խի ժամանակ հոտառութիւնը կ'ըլլայ ակար:

Հոտառութեան զարմանալի սրութիւնը կը  
աեսնուի շունելուն վրայ :

Հ. Հոտառութեան որութիւնը ուղեղին եւ  
հոտառութեան ջիղին առողջ ու ոնդաց թա-  
զանթին բարակ եւ խմառ ըլլալէն կախումն  
ունի:

Հ. Ի՞նչ խնամք պարտիմք ունենալ չնշո-  
ղութեան մասին:

Պ. Զանալու է չնշողութիւնը գրեթէ միշտ  
քթին միջոցաւ գործադրեւ, այսինքն ըստ կա-

բելւոյն բերանը դոց պահել մանաւանդ հովի  
դիմաց :

3<sup>0</sup> ՃԱՇԱԿԵԼԻՔ

Հ. Ո՞րն է ճաշակման զգ այսրանը :

Պ. Ճաշակման գլխաւոր գործարանը լեզուն  
է, որոյ միջոցաւ կ'առնումք մարմնոց համը :

Հ. Ի՞նչպիսի մարմին է լեզուն :

Պ. Լեզուն մսուտ, առածգական, կակուղ



1, Ակնակապին աչաց : 2, Վերին ծամելիք : 3, Լեզու :  
4, Ստորին ծամելիք : 5, Զիրեռուն նինգերորդ զոյզք : 6, Սյա  
շիղին առաջին նիւղը որ կ'անցնի յաչս : 9, 10, 11, 12, 13,  
14, Այս շիղին բաժանմունքը : 7, Երկրորդ նիւղը որ կ'անցնի  
վերին ծամելեաց ակռայները : 16, 17, 18, 19, 20, Սնոր  
բաժանմունքը : 8, Երրորդ նիւղը, որ կ'անցնի լեզուին և սոս-  
րին ծամելեաց ակռայները :

մարմին մ' է որ երկճիղլեզուկը միջոցաւ բեր-  
նին ետեւի կողմը հաստատուած է, իսկ առ-  
ջեւի կողմէն ազատ :

Հ. Լեզուին վրայ ի՞նչ կը գտնուի :

Պ. Լեզուին վրայ կը գտնուին անհամար  
պտկունքներ, որք լեզուին կ'ուտան թաւշի կեր-  
պարանք, Յիշեալ պականց մէջ վերջացած են  
համ առնող ջեղերտն ծայրերը :

Հ. Ի՞նչպէս կերպակրոց համը կ'առնուի :

Պ. Համ ունեցող մարմինը պէտք է ըլլան  
ի բնէ հեղուկ և կամ պէտք է տաղկին մէջ  
լուծուին մասամբ, համ տալու համար: Երբ  
հեղուկ մը կ'առնուի բերանը, վերայիշեալ պլա-  
կունք կ'ընդարձակին և կը բարձրանան, և աս-  
կէ յառաջ եկած ազգումը ճաշակման ջղին մի-  
ջոցաւ կ'երթայ ուղեղին :

4<sup>0</sup> ԼՍԵԼԻՔ

Հ. Ի՞նչ է լսողութիւնը :

Պ. Լսողութիւնն է այն միջոցը որով կ'իմա-  
նամք մարմնոց ձայն կազմող թրթռիչ շար-  
ժումները :


Հ. Ո՞րն է լսելեաց գործարանը :

Պ. Լսելեաց գործարանն է Ականջը: Այս  
զգայարանը՝ որ կարեւորութեան կողմանէ կը  
դասուի տեսութեան զգ այսրանէն անսիջապէս

ետքը, է մարմիոյն բազմամասն դործարանաց մին:

Հ. Ականջը քանի՞ մասէ կը բազկանայ:

Պ. Մարդուն ականջը երեք մասերէ կը բազկանայ, որք են. 1<sup>o</sup> Արտափին ականջ, 2<sup>o</sup> Թմբուկ կամ Միջին ականջ եւ 3<sup>o</sup> Բարիդ կամ Ներփին ականջ:



Ա. Արտափին ականջ: Յ. Միջին ականջը տանող խողովակը: Շ. Ականջին թմբուկը: Ե. Կ. Միջին ականջ: Ի. Ներփին ականջ: Ի. Կոլորդը տանող խողովակը: Դ. Լուղութեան ջրը:

Հ. Ի՞նչ կը պարունակէ արտաքին ականջը:

Պ. Արտաքին ականջն որ ունի շատ ծագք եւ ակօսներ, կը պարունակէ 1<sup>o</sup> Զագառը եւ 2<sup>o</sup> Լուղական ջրը:

Հ. Նկարագրէ ձագառը:

Պ. Զագառը գլխէն գուրո ցցուած կրծիկոտ մարմին մ՞ է, որոց վարի կողմը կակուզ մասով մը կը վերջանայ որ Բլթակ կ'ըսուի, Զագառուին մէջտեղը փոս մը կայ որ Խալիջոնն կը կոչուի, որոյ կը յաջորդէ լսելափողը. այս խոզվակին որմանքներէն կը ծորէ գեղին նիւթ մը որ ևելս կամ Մոմ ականջի կ'ըսուի:


Հ. Ո՞րն է միջին ականջը:

Պ. Թմբուկը կամ միջին ականջը որ լսելափողին կը յաջորդէ ոսկրէ խոռոշ մ՞ է: Թմբուկը լսելափողին կողմը ունի ծակ մը, որ Գափ կամ Թմբիկի թաղանթ ըսուած բարակ կէս թափանցիկ մաշկով գոցուած է: Գտփին հակառակ կողմը կը գտնուին ուրիշ երկու ծակնք, որք իւրեանց ձեւոյն համեմատ կ'ըսուին կլոր եւ ձուածե Պատոհանի, որք նմանապէս պիրկ մաշկով գոցուած են: Ասոնցմէ զատ թմբուկին որմանքին վերայ կը գտնուի ուրիշ ծակ մ՞ալ որ Եւսթաթեան փող ըսուած խողովակով կը հաղորդակցի քթափողին Տետ, թմբուկին մէջի օդը նորսգելու համար:

Հ. Թմբուկին մէջ ի՞նչ կը գտնուի:

Պ. Թմբուկին մէջ կը գտնուին չորս մանր ոսկրներ, որք իւրեանց նրբին եւ գեղեցիկ ձեւոյն համեմատ կը կոչուին, 1<sup>o</sup> Մուրճ, 2<sup>o</sup> Սալ,

Յո Ոսպնակերպ ուկր եւ կօ Ասպատաճ: Մուր-  
ճին կոթը կը յենու դափին վերայ եւ գլուխը  
սալին վրայ, որոյ միւս ծայրը կցուած է ոսպ-  
նակերպ ոսկրը. եւ ասոր կցուած է ասպա-  
տաճին գլուխը եւ ասպատաճին յատակը կը



1, Ներին ականջը տանող խողովակը : 2, Թմբուկ: 3, 4, 5,  
Ականջին ոսկրները: 7, Գալիք: 8, 9, 10, Կիսաշշանական անցք: 11,  
12, Խղունչի անցք: 13, Լոտղորեան ջիղ: 14, Եւրաֆեան  
խողովակ: 15, Թմբկին ջիղը :

Կրթնի ձուակերպ պատուհանին մաշկին վերայ:  
Ի մի բան վերոյիշեալ ոսկերք այնպէս կար-  
գագրուած են որ շղթայ մը կը կազմեն դա-  
փէն մինչեւ բաւիդը:

Հ. Ո՞րն է ներքին ականջը եւ ի՞նչ կը  
պարունակէ:

Պ. Ներքին ականջը որ կը կոչուի նաեւ բա-  
ւիդ, վասնղի է պառատակածեւ, միջին ական-  
ջին կը յաջորդէ, եւ է կարեւորագոյն մասն  
լսողութեան. բաւ իզը կը բաղկանայ երեք մա-  
սերէ, որք են՝ 1<sup>o</sup> Գալիք (որ եռանկիւնաձեւ  
խոռոչ մ' է). 2<sup>o</sup> Խղունչ (վասնղի ունի խղուն-  
ջի պատենի նմանութիւն) և 3<sup>o</sup> Կիսաշշանա-  
կան անցք (որոց թիւն է՝ երեք): Ամբողջ բա-  
ւիդը լի է մասնաւոր հեղուկով մը, որոյ մէջ  
կը գտնուին լսողական ջղերուն վերջին ծայրերը  
պարունակող փոքրիկ պարկեր:

Հ. Լսողութիւնը ի՞նչպէս կը կատարուի:

Պ. Չայնատու մարմինք օդին միջոցաւ իւր-  
եանց ձայնը կը հաղորդեն ականջին. Ճայնը ա-  
կանջին խալիպանին մէջ կ'ամփոփի և լսելափողին  
որմունքներուն բաղխուելով և անդրագառնա-  
լով կը համնի դափին վրայ որ ճայնէն շար-  
ժուած օդին ալիքներէն կը ցնցուի, եւ իւր  
այս ցնցումը թմբուկին որմուքներուն, եւ մէջը  
գտնուած օդին, եւ չորս ոսկերց միջոցաւ կը  
համնի կլոր եւ ձուածեւ պատուհաններուն,  
որք իրենց ընդունած յնցումը կը հաղորդեն  
բաւզին մէջ գտնուած հեղուկին պարկիկնե-  
րուն յորս կը գտնուին լսողական ջղերուն վեր-

ջին ծայրերը. Եւ այսպէս այդ ջղերը, զըրդ-  
ռուելով ցնցումէն, կը հաղորդեն ձայնը ուղե-  
ղին եւ սա կ'անդրադառնայ ձայնին վերայ:

Հ. Լսողութեան վնասող պատճառներէն  
զոմանս յիշէ:

Պ. Լսողութեան զգայաբանին տկարութեան  
գլխաւոր պատճառը հետեւեալներն են: Ա.  
Երբ լսելափողին մէջի եղած կեղտը շատնայ.  
վասնղի յայնժամ ձայնին ալիքները չը կարե-  
նալով անդրադառնալ լսելափողին որմունքնե-  
րէն, ձայնը կը տկարանայ և հետեւապէս լսո-  
ղութիւնը կը ծանրանայ: Բ. Սաստիկ ձայներու  
մօտ գտնուելով շարունակ, ինչպէս են թնդա-  
նօթաձիգ սպայք: Գ. Դափին պատռելով, մուր-  
ճին, սալին եւ ոսպնակերպ ոսկեր իյնալովը:  
Դ. Եւսթաքեան փողին դոցուելովը, որովհե-  
տեւ յետ այնորիկ թմբուկին մէջի օգը չը կըր-  
նար նորոգուիլ: Ե. Ասպատճնին իյնալովը,  
վասնղի ասոր անկմանը կը պատռի ձուածեւ  
պատռհանին մաշկը, որով բաւղին մէջ գըտ-  
նուած հեղուկը թմբուկին մէջ կը հօսէ եւ այս  
պարագային լսողական թելերը հեղուկէն զըր-  
կուելով՝ կը զրկուին նաև ձայնէն գրգռուելու  
զօրութենէն: Եւ վերջապէս Զ. Ուղեղի հիւան-  
դութիւնը մեծապէս կը տկարացնէ զլողու-  
թիւն:

Հ. Ի՞նչ գարման պարտիմք ունենալ յա-  
շագու լսողութեան:

Պ. Վերոյիշեալ պատճառներէն կը հետեւի  
թէ զօրաւոր լսողութեան համար ականջին բո-  
լոր մասանց կազմութիւնը եւ գործողութիւնքը  
ըլլալու են կատարեալ, գլխաւորապէս ուղե-  
ղին այն մասը, ուստից լսողական ջիղերը կ'առ-  
նուն ծագում՝ ըլլալու է առողջ և կատարեալ:

Ա. Կանջին մէջ զնդասեղի դուխ մուծանել  
վնասակար է, քանզի այս ստէպ բորբոքման  
պատճառ կ'ըլլայ: Ա. զտեղութիւնը մաքրելու  
համար, ականջին մէջ քիչ մը եղկ ձէթ կա-  
թեցնելու, եւ մէկ երկու ժամ յետոց օճառի  
զաղջ ջրով լուալու է ականջին մէջը:

#### 5º ՏԵՍԱՆԵԼԻՔ

Հ. Ի՞նչ է տեսազութիւնը:

Պ. Տեսողութիւնն է արտաքին առարկայից  
գոյնը, ձեւը, մեծութիւնը, դիրքը եւ որպի-  
սութիւնը զգալու միակ եւ անհրաժեշտ մի-  
ջոցը:

Հ. Ո՞րն է տեսանելեաց գործարանը եւ  
ո՞ւր կը գտնուի:

Պ. Տեսնելու գործարանն է Այլը: Այս  
հիանալի գործարանը զնդաձեւ թաղանթներէ  
եւ հիւթերէ ձեւ այցած մարմին մ' է եւ կը գըտ-


նուի Ակնակապիճ ըսուած գէմքին եւ դանկին առաջակողման վսոսին մէջ :

Հ. Աչքը ի՞նչ կը պարունակէ :

Պ. Աչաց արտաքին մասը կը պարունակէ երեք ծածկոյթ կամ թաղանթ, որոց մէջ այլ եւ այլ նիւթեր կան, որք կը կոչուին Խոնարհինթ:

Հ. Ծածկոյթներուն անուանքը ի՞նչ են :

Պ. Աչաց երեք ծածկոյթները հետեւեալքն են. 1° Կարծրաբաղանթ եւ եղջերիկ. 2° Ակնածրար, Ծիածան եւ Թարթչական ծայդ. և 3° Յանցակերպ :



Աչքին հատուածը որ ներսէն կը տեսնուի: 1. Երեք ծածկոյթներուն ծայրերը: 2. Եփքը: 3. Ծիածանը: 4. Թարթչական ծալք: 5. Յանցակերպ :

Հ. Խոնարհիւթք ո՞յք են :

Պ. Խոնարհիւթք նմանապէս երեք մասէ

բաղկացեալ են, և են հետեւեալք. 1° Խոնարհինթ յրեղէն. 2° Խոնարհիոթ սառնակերպ եւ 3° Խոնարհինթ ապակեղէն:

Հ. Նկարագրէ կարծրաթաղանթ ծածկոյթը:

Պ. Կարծրաթաղանթը կամ՝ Սպիտակուց աչացը որ աչքին ամենէն արտաքին մասը կը կազմէ, սպիտակ և լուդղիմահար թաղանթ մ'է, որոյ առջեւի կողմը ժամացայցի ապակու ոյ նման կորնթարդ եւ թափանցիկ՝ եղջերիկ կ'ըսուի: Կարծրաթաղանթը, իւր կարծրաթեանը պատճառաւ գլխաւոր պաշտպանն է աչաց :


Հ. Ո՞րոնք են ակնածրար, ծիածան եւ թարթչական ծալք:

Պ. Սպիտակուցին անմիջապէս տակը կը գտնուի Ակնածրարը՝ որուն ներքին երեսը մթագոյն է, եւ կը պարունակէ արեան բաղմաթիւ անօթներ, որք կ'ուտան մնունդ աչաց այլ եւ այլ մասերուն:

Ծիածանը որ գոյնզդոյն մաշկ մ'է, եւ դըրուած Ակնածրարին յետակողմը, աւելի փափուկ է քան զայլ մկունս մարմնոյն: Ծիածանին կեղլանը բոլորաձեւ ծակ մը կայ որ կը կոչուի Բիթ. սա կ'ամփոփուի եւ կ'ընդլայնի ըստ չափոյ լուսոյն որ կ'ուդայ յաչս:

Եթէ խնամով դիտենք աչաց այն մասը որ

բրին մօտ է, կը տեսնենք քան զբիրն տւելի  
բաց գոյն ունեցած փոքր սրոշ զ ծեր, որք կ'անց-  
նին ծիածանին գուրսի կողմը, Սոքա կը կոչ-  
ուին թարթչական ծալք, սրոց թիւն է իբր  
վաթուուն:



4, Կարծաքաղաք՝ ծածկոյթը: 2, եղջերիկ: 3, Ալբանցա  
ծածկոյթը: 6, 6, Ծխման: 7, Բիթ: 8, Ցանցակերպի: 10, 11,  
11, Ջեղեկ խոնաւանիթը: 12, Սառնատսակ խոնաւանիթը: 13,  
Ապակեղեկ խոնաւանիթը:

## Հ. Յանցակերպովի ի՞նչ է :


Պ. Ակնածրաբի տակ կը գտնուի տեսողական ջղմն թերէն հիւսուած թաղանթ մը ուրուն կըսուի ցանեցակերպ :

Հ. Նկարագրէ խոնաւահիւթեղը:

Պ. Յանցակերպին (աչաց յետասակողմբ) մէջ  
կը դանուի ապակեղէն խոնաւահիւթ ըսուած  
մարմինը, որ աշքին ներսի կողման մեծագոյն  
մասը կը գրաւէ:

Զբեղվէն խոնաւահճիւթոյ և բբին յետսակկոզմը  
կը գտնուի բնագիտական սոսպի ձեւով մարմին  
մը, որուն կ'ըսուի սառնակերպ խոնաւահճիւթ :

Եւ վերջապէս եղջերկին եւ սառնակերպին մէջտեղի միջոցը որ նախախուց կ'ըսուի,  
լի է ջրեղէն խոնաւահիթով. Խոկ ծխածանին  
Եւ սառնորակին մէջտեղի միջոցը որ Յետնա-



4, 4, Աչաց երկու զուտիերը: 2, Տեսութեան ջիլը: 3, 4, Ուղելը: 5, 6, Ողբայարի քելին վերի ծայրը : 7-13, Զիդեր:

իսուց կը կոչուի, լի է ապակեղէն խոնաւահիւթով: Զրային եւ ապակեղէն խոնաւահիւթերը, սառնորակը եւ ապակեայ մարմինը թափանցիկ են:

Հ. Ո՞ր ջիղերը աչքերուն կը ծառայեն:

Պ. Աչաց ծառայող ջղերն են ուղեղէն ծագած ջղերուն առաջին զայդը. այս ջղերը աչքերուն երթալէն յառաջ զիրար կը կտրեն խաշաձեւ, առանց իրարու. հետ խառնուելու. եւ ձախ կողմի ջիղը աջ աչքին կերթայ, իրեն հետ տանելով միանգամայն աջ ջղէն մի քանի թերլեր, իսկ աջակողման ջիղը կը ծառայէ ձախակողման աչքին, իրեն հետ ունենալով ձախակողման ջղէն մի քանի թերլեր. որով եթէ ձախակողման ջիղը կարուելու ըլլայ, աջակողման աչքը կը կուրամայ, իսկ ձախակողմանը կը տկարանայ եւ փոխադարձարար:

Հ. Ո՞րո՞նք են աչաց երկրորդական մասերը:

Պ. Աչաց երկրորդական մասերն են՝ 1° Դընդերներ, 2° Կոպերը եւ 3° Յօնիները:

Հ. Ի՞նչ է գնդերց պաշտօնը:

Պ. Աչաց գնդերը, որոց մի ծայրը կը միայ ակնակապիճի ոսկիներուն, եւ միւս ծայրն՝ աչաց գունդին հետ, են թուով վեց, եւ կը ծառայեն իւրաքանչիւր աչքը յաջ եւ յահեակ, վեր եւ վար, ինչպէս նաեւ բոլորաձեւ շարժմունք մը տալու:

Հ. Ի՞նչ են կոպք եւ ի՞նչ է նոցա պաշտօնը:


Պ. Կոպերը որ կրկին են, իւրեանց եղերը Արտելանունք ըստած մաղերով ծածկուած են:

Կոպերուն ետեւի կողմը շատ փափուկ է եւ մասնաւոր հսամիւթ մը կը ծորէ, որ աչքին անկիւնը գտնուած գեղձիկէն գոյացած արցունքին հետ խառնուելով կը ծառայէ աչքը մաքրելու. Արպէս զի այդ երկու հեղուկները կոպերէն գուրս չելլեն, կոպերուն եղերքէն կը ծորէ Բիծ ըստուած իւղային նիւթը. Աչաց անկեանց վերայ կը գտնուին ծակեր, ուսկից աւելորդ արցունքը քթափողին մէջ կը վազէ եւ անկից գուրս կ'ելլէ, բայց երբ աչքը գրգռի, այնչափ արագ կ'գոյանայ արտօսրը, որ չկրնար քթին մէջ երթաւ, և կը հօսէ այտերէնի վար:

Կոպերուն ինչպէսնաեւ Յօնդերուն (որք ճակատին վարի եղերքը գտնուած կամարի ձեռվ երկու մասերու վերայ հաստատուած մաղերն են) պաշտօնն է. Ս. Լուսոյ սասափի տպաւորութենէն աչքերը պաշտպանել. Բ. Փոշւոյ և քրտան մասանց աչաց մէջ իյնալը արդելուլ և այլն, և այլն: Կոպերը ոչ միայն կը պաշտպանեն աչքը այլնաեւ իւրեանց յաճախակի թարթմամբք կը բաշխեն հաւասարագէս աչաց գեղձերէն գոյացեալ հեղուկը:

Արտեւանունք եւս իրենց մասնաւոր պաշտօնն ունին: Եղբ կը փակուի աչքը, ասոնք իւրարու անցնելով կը պաշտպանեն այս փափուկ եւ գեղեցկահիւս գործարանը:

Հ. Տեսողութիւնը ի՞նչպէս կը կատարուի:  
Պ. Տեսնելու համար անհրաժեշտ է լոյսը. Ա-  
րեգական կամ՝ ուրիշ ու և է լուսոյ ճառագայթ-  
ները կյանալով երկրիս վրայ դանուած առար-  
կայից վերայ կ'անքրագառնան և կ'ուզան մեր  
աչաց մէջ. կ'անցնին եղջերկին մէջէն, կը թա-



a, b, c, d, e, Աչաց մկանունք; f, Տեսութեան ջիղ:

Փանցին ջրեղէն հիւթէն, բիրէն, ապակեայ  
հիւթէն, սառնորակէն, ապակեայ մարմնէն եւ  
կը համնին ցանցակերպին վերայ, ուր կը կազ-  
մեն առջեւը գանուած առարկայից շըջուած  
պատկերը. սա կը գրգռէ զտեսողական ջիղն

որ առարկային պատկերը, գաղափարը կը հա-  
զորդէ տղեղին և սա հոգւոյն յայնժամ միայն  
կը տեսանեմք բուն առարկային:

Հ. Տեսողութիւնը ի՞նչ թերութիւններ ունի:

Պ. Տեսողութիւնը ունի թերութիւններ. ինչպէս Հեռատեսութիւնն եւ կարձատեսութիւնն. Առաջինը առաւել ծերերուն մէջ կը նշանարուի, մինչդեռ երկրորդը՝ երիասասրդաց մէջ.

Բնդհանրապէս սովորութեամբ աչքը իւր  
կանոնաւորութիւնը կը կորուսանէ. ինչպէս նա-  
ւապետը ստիպեալ հեռատես կ'ըլլայ, մինչ-  
դեռ ժամագործը, փորագրիչը եւ այլն՝ կար-  
ճատես:

Հ. Ե՞րբ կը պատահի հեռատեսութիւնը:

Պ. Երբ եղջերիկը եւ խոնարահիւթ սառնա-  
կերպը կը կորմնցնեն իրենց կորութիւնը, ինչ-  
պէս կ'ըլլայ ի ծերութեան, առարկային պատ-  
կերը կը նկարուի ցանցակերպէն անդին, որով  
հեռատեսը կ'ստիպուի առարկային աչքէն հե-  
ռացնել, որպէս զի պատկերը ցանցակերպին  
վրայ ձեւանայ:

Հ. Ե՞րբ կը պատահի կարճատեսութիւն:

Պ. Երբ եղջերիկը եւ խոնարահիւթ սառ-  
նակերպն աւելի կորմթարդ են, ինչպէս կ'ըլլայ  
յերիասասրդութեան, առարկային պատկերը  
կը նկարուի ցանցակերպէն ասդին, որով կար-

ճատեսը կ'ստիպուի առարկան մօտեցնել աչքին, որպէս զի պատկերը ցանցակերպին վերայ ձեւանայ:

Հ. Վերոյիշեալ թերութեանց դարման չկայ:

Պ. Այս երկու թերութեանց դարման մը ընելու համար հնարաւեցան ակնոցները: Հեռատեսից եղջերիկը տափարակ ըլլալուն համար հարկ է գործածել կորնթարդ ակնոց. իսկ ընդհակառակն կարճատեսից եղջերիկը չափազանց կորնթարդ ըլլալուն համար հարկ է գործածել գործառը ակնոց:

Հ. Ի՞նչ խնամք պարախմք ունենալ յաղագս տեսողութեան:

Պ. Աչքը միւս ամեն գործարաններէն աւելի փափուկ ըլլալով՝ պարտիմք կարելի եղածին չափ ինսամով եւ խմաստութեամբ գործածել զայն: Չափազանց ուսման աշխատիկը կը տկարայնէ աչքը, մանաւանդ ճրագի լուսով աշխատիլը: Երբ յառեալ կը նայինք առարկայի մը ընդերկար, աչքը կը յոդնի, եւ անոր տեսութեան զօրութիւնը կը տկարանայ. ընդհակառակն երբ աչքը բնաւ չգործածուիր, կը տկարանան իւր պաշտօնները:

Երբ փոշեղէն հիւլէներ կը լեցուին աչքին մէջ, մարդը գրուելու է զօրաւոր լուսոյ մը առջեւ, եւ անոր արտեւանունքը բանալով,

բարակ եւ կակուղ թաշկինակի մը ծայրով զգուշութեամբ վերցնելու է մէջի հիւլէները:

Հ. Ընդհանուր զգայարանաց վերայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Այս հինգ զգայարանաց մէջէն, օրինակի աղագաւ աչքը կամ ականջը եթէ խանգարուին, միւս զգայարանք կուժումնան. զոր օրինակ կոյրերը՝ մատով չօշափելով կրնան իմանալ գրամին տեսակը, մինչեւ իսկ կը ուատուի թէ, կոյրեր եղած են որք չօշափմամբ նոյն իսկ մարմնոց գոյնը որոշեր եւ ապագրական գրեր կարդացեր են, և այլն:

Հ. Այս զգայարանք ընդհանուր առմամբ ի՞նչ կը կոչուին:

Պ. Այս զգայարանք ինչպէս նաեւ բնագդումը, իմացականութիւնը, բարբառը և այլն, կ'ըսուին կենդանական յատկութիւնն, որովհեաւ սոքա միայն կենդանեաց մէջ կը նըշմարուին: Իսկ կան գործողութիւններ որք թէ կենդանեաց եւ թէ բուսոյ մէջ կը նշարուին, ինչպէս աննզական գործողութիւնները եւ բազմասերութիւնը որոց կ'ըսուի Ամումն:

Գ Լ ՈՒ Խ Ե



## Ս Ն Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ

Հ. Ի՞նչ է սննդականութիւն:

Պ. Սննդականութիւնն է այն գործողութիւնը որով կենդանին խւր ներքին հանապազօրեայ կորուստին տեղը լեցնելու եւ աճումը յառաջացնելու համար սնունդ կ'առնու:

Հ. Սննդեան ծառայողնիւթոց ի՞նչ կ'ըսուի:

Պ. Այն ամեն նիւթ որ կը ծառայէ սննդեան, կը կոչուի ձարակ:

Հ. Ճարակը նոյնատեսանկ են:

Պ. Ամէն կենդանի նոյն ճարակը չառնուր, սմանք գոհ կ'ըլլան միայն լուսեղէնով եւ կ'ըսուին բուսաճարակ. այլք միայն կենդանական սնունդ կ'առնուն եւ կ'ըսուին կենդանաճարակ. իսկ կան կենդանիներ ալ որ թէ բուսաճարակ են եւ թէ կենդանաճարակ, եւ կ'ըսուին Ամենակեր, ինչպէս՝ մարդը եւ խոզը:

Հ. Բուսաճարակաց տեսակները ո՞րոնք են:

Պ. Ոմանք ի բուսաճարակաց կ'ուտեն խոտ, ծառի տերև եւ կեղեւ, ասոնք կ'ըսուին խոտակեր. ինչպէս կով ոչխար եւ այլ արջառք: Ոմանք կը սնանին ծառի պաղով եւ բանջարե-

շէնով եւ ասոնք կ'ըսուին Պտղակեր եւ Բանջարակեր. ինչպէս կապիկը, (բնախօսներէն ոմանք նա մանաւանդ բանջարասէր ըսուածմարդիկ, և զմարդ այս կարգին մէջ կը դասեն: Բանջարասէրք ընաւ միս չեն ուտեր. այս ընկերութեան անդամները մի քանի հազարէ աւելի չեն, որոց մեծագոյն մասն են Անդիխացի և Գերմանացի): Ոմանք յանուած հունտեր կ'ուտեն եւ կ'ըսուին Ընդակեր. ինչպէս ճնճղուկը եւ այլ թռչունք:

Հ. Կենդանաճարակաց տեսակները ո՞րոնք են:

Պ. Կենդանաճարակաց ոմանք միայն հում միս մանաւանդ աղականնեալ միս կ'ուտեն, եւ կ'ըսուին Շաղղակեր կամ Գիշակեր. ինչպէս Առիծ, Վազը, Անգլենային, Ոմանք ձուկով կամ ծուլցին կենդանիներով կը սնանին և կ'ըսուին Զկնակեր. ինչպէս կէտ ձուկը, ճահճային թռչուններ և այլն: Իսկ սմանք մանր ճնիներով կամ միջատներով կը սնանին եւ կ'ըսուին Միջատակեր. ինչպէս միջինակեր եւ ճճեկեր թռչունք և կենդանիք:

Հ. Ճարակը ի՞նչպէս կը հասնի խւր նպատակին:


Պ. Ճարակը Մարտողական գործարանաց միջոցաւ կը հասնի խւր նպատակին:

Հ. Ոյք են մարսողական գործարանք:

Պ. Մարսողական գործարաներն են՝ 1° Բերան, 2° Ատամունի, 3° Լորձեան գեղձեր, 4° Փող, 5° Արկոր, 6° Ստամփս, 7° Աղիի, 8° Կաթներակներ, 9° Մասեացի անցի, 10° Լեարդ և 11° Պանկրաս.

Հ. Ի՞նչ է բերանը:

Պ. Բերանն է անկանոն խոռոչ, որ կը պարունակէ առանձին բը և ճաշակման գործարանները:



1. Ենթառությական զեղձ: 2. Ենթակրակային զեղձ: 3. Ենթակուեան զեղձ:

Հ. Ի՞նչ են լորձեան գեղձերը:

Պ. Տողուկը կը դպրանայ Յ զայդ գեղձերէ(\*):

(\*) Գեղձի կրառուն մարմարն մէջ գտնուած սպնդանման գործարաններ, որ կը ծորն մանաւու նիւթ ը որ սննդականութիւն, բավասարութեան զգացարանաց եւ այլն կը ծառայէ. ինչպէս գեղձեր են Սիթին, որ կաթ կը ծորէ. Լեարդը, որոյ մէջ մաղօ կը դպրանայ եւայլն, եւայլն:

Սյս գեղձերուն մէկ զայդը կը դանուի լեզուին տակ եւ կ'ըսուի Ենթակրական զեղձ. միւս զայդը կը դանուի երկու կղակիներուն կցուած տեղին տակ, եւ կ'ըսուին Ենթակրակային զեղձ. իսկ միւս զայդը կը դանուի ականջներուն տակ եւ կ'ըսուի Ենթառունկական զեղձ. Սյս գեղձերուն մէջ գոյացեալ տողը կը մասնաւոր խոզովակներով կը հասնի բերնին մէջ:

Հ. Ի՞նչ է փողը:

Պ. Փողը մկանական թաղանթային պարկ մ'է, որ կը նայ ըսուիլ թէ որկորին սկիզբն է:

Հ. Ի՞նչ է որկորը:

Պ. Որկորը մաշկեայ խոզովակ մ'է, որ շընչափողին, ետեւի կողմը կը դանուի: Որկորը վարի կողմէն միացած է ստամոքսին ուր կ'իջնէ կերտակուրը եւ ըմպելին խոր (որկոր) միջոցաւ:


Հ. Ի՞նչ է ստամոքսը: ո՞ւր կը դանուի եւ բնչէ բազկացեալ է:

Պ. Ստամոքսը տկնարի ձեւով մաշկէ պարկ մ' է որ կը դանուի մարմարն ձախ կողմը, սըրտին և թոքերուն տակ, եւ կը կողմաւի երեքկին թաղանթէ, որոց խրաբանչխուլն է բարակ և առածդակական: Արտաքին թաղանթը կը կոչուի Շնկային, միջինը՝ Մկանական և ներքինը՝ Խժային Խաղամթ:

Ստամոքսին ներսի կողմը կը դանուին ամե-

Նամանիր եւ անթիւ գեղձիկներ, որք մասնաւոր հիւթ մը կը հօսեն եւ որուն կ'ըստի Ստամփ-սական հիւթ:

Ստամփովն եւ որկորին մէջաեղ եղած ծա-կը կը կոչուի Մրտածակ, որովհետեւ որտին մօս կը գտնուի. իսկ ստամփովն եւ աղեաց մէջ գտնուած ծակը կ'ըստի Գոնակ:



1. Ուկորին վարի մասը : 2, Կերակրոյն ստամփը մնելու անցքը: 3, Ստամփն: 4, Կերակրոյն ստամփսէն ելլելու անցքը: 10, 11, 14, Նախաղի: ա, բ, ս, Ստամփին երեմին բաղանքը :

Հ. Ի՞նչ է աղեքը և քանի մասի կը բաժնուի:

Պ. Աղեք կամ մնդական խողովակ կ'ըս-տովն կարդ մը մաշկէ խողովակներ, որոց մեծադիրն մասը բարակ է, իսկ փոքրադիրն մասը հաստ: Առաջինը կ'ըստի Նուրբ աղիք, իսկ

Երկրորդը Թանձր աղիք: Նուրբ աղեքն ունի 25 ստամփավի երկայնութիւն, ասոր վերին մա-սը կը կոչուի Նախաղի, Թանձր աղեքն ունի 5 ստամփավի երկայնութիւն:

Նուրբ աղեքին մէջ կան մանր գեղձիկներ, ուստից կը հօսի մասնաւոր հիւթ մը:

Հ. Թանձր աղեքը քանի մասեր կը ներկա-յացնէ:

Պ. Թանձր աղեքը երեք որոշ մասեր կը ներ-կայացնէ 1º Կուրաղի, 2º Դալրաւաղի եւ 3º Ուղղորդ, Կուրաղոյն քոլ բարակ մաս մը կայ որ Ուղղաձեւ յաւելուած կը կոչուի:

Հ. Ի՞նչ է նոխաղին:


Պ. Նոխաղի, որ երբեմն երկրորդ ստամփը եւս կը կոչուի, վերին եւ գլխաւոր մասն է նուրբ աղեաց. ունի 12 մասնաչափ երկայնու-թիւն, և կ'սկսի ստամփսին վարի բերնէն:

Հ. Ի՞նչ են կաթներակները

Պ. Կաթներակներն են նուրբ անօթներ, որ կը բացուին նուրբ աղեաց խժային երեսին վրայ: Սոքա աղեաց Միջընդերեւայ կոչուած գեղձե-րէն կ'անցնին մամացի անցքին մէջ:

Հ. Ի՞նչ է մամացի անցքը:

Պ. Մամացի անցքը կ'սկսի Երդին ետեւի կողմէն, եւ ողնացարի սեան առաջակաղմէն կ'եւէ վեր մինչեւ վիզը. ապա նորէն վար կը



Մարսողական զոհարանաց զաղափարական երեւոյ մը :  
1. Վերի ծամելիք : 2. Վարի ծամելիք : 3. Լեզու : 4 Բերինի  
վերի մասը : 5. Ուկոր : 6. Խռչափող : 7. Ենթանեկական զեղձ :  
8. Ենթալեզունան զեղձ : 9. Ենթակախոտին զեղձ : 10, 10,  
Լեզու : 11 Մաղձապորլ : 12, Մաղձը նախադիմ (13, 13) սա-  
նող անցքը : 14, Պանկրաս : 15, 15, 15, 15, Նրբալիք : 16,  
Նրբալեաց անցքը որ կ'անցնի ի բան աղին : 17, 18, 19, 20,  
Թանձ աղիք : 21, Փայծալ : 22, Աղնայարի մեան վերի մասը :

դառնայ , եւ անրակին ետեւի երակին մէջ  
կը թափէ իւր մամացը :

Հ. Ի՞նչ է լեարդը , եւ ո՞ւր կը գտնուի :

Պ. Լեարդն է յատուկ գործարան ուստից  
կը գոյանայ Մաղձը որ դառն հեղանիւթ մ'է ,  
եւ կը ժողվուի լեարդին կից փոքր պարկի մը  
մէջ : Լեարդը կը գտնուի մարմնոյն աջ կողմը ,  
թռին տակ :

Հ. Ի՞նչ է պանկրատ :

Պ. Պանկրատն է երկայն եւ տափակ գոր-  
ծարան մը , որ կ'իյնայ ստամոքսին տակ եւ ա-  
նոր ետեւի կողմը : Ասկէ կը հոսէ ի նախաղին  
հեղանիւթ մը , որ կը կոչուի Պանկրատի հիւթ :

Հ. Ո՞րու կ'ըսուի փայծալ :

Պ. Փայծալն է երկայնաձեւ , տափակ գոր-  
ծարան որ մարմնոյն ձախ կողմը կցուած է  
ստամոքսին եւ պանկրատին :

Հ. Ի՞նչ է աղէճարպը :

Պ. Աղէճարպը ճարպ է շճկային թաղան-  
թի շարքերուն մէջ , յարած է ստամոքսին , եւ  
կը փակչի աղեաց առաջակողման :

Հ. Մննդականութեան առաջին գործողու-  
թիւնը ի՞նչ կը կոչուի :

Պ. Մննդականութեան առաջին գործողու-  
թիւնը Բոնողուրիւն կը կոչուի , որ է սնուն-  
դը առնուլ եւ բերանը դնելը :

Հ. կերակուրը քանի՞ մասանց կը բաժնուի:

Պ. կերակուրը կամ ճարակը, որ կարծը է և կամ հեղուկ, կրնանք գլխաւոր երեք տեսակ մասերու բաժնել.

Ա. Նշայական մաս, որ էապէս երեք տարերքէ կը բաղկանայ. որք են՝ Բնածուխ, Զրածին եւ Թթուածին. Նոյնպէս շաքար եւ շաքարի տեսակ նիւթեր որք ջրոյ մէջ լուծանելի են. Նշայն տողուկին մէջ գտնուած բնիւթն (ptyaline) կոչաղը նիւթին ազդեցութեամբ շաքարի կը:

Նշայական մասը բերնին մէջ տողուկին ազդեցութեամբ կը լուծուի եւ կը մարսուի:

Բ. Բորակածնաւոր մաս, որ էապէս չորս տարերքէ կը բաղկանայ. որք են՝ Բնածուխ, Թղթուածին, Զրածին եւ Բորակածին. Բորակածնաւոր նիւթերն են միս, հաւկիթ, կաթ և այլն. որք Ստեղծական նիւթեր ես կըսուին, որովհետեւ այս նիւթեր մեր մարմնոյ մէջ պակստնածին տեղը կը լեցընեն եւ ուղղակի մեր աճման կը ծառային (\*):

(\*) Ստամորական հիւթին ստեղծական նիւթոց վրայ ունեցած ազդեցութիւնը զառաջինն հաստացելին Ռէօմիւր, Հսպալանցանի եւ Պօմօն բժիշկը: Այս վերջինս փորձեց երիսասարդի մը վրայ ուրոյ քովը եւ ստամորսը հրացանի հարուածով ծակուած էր: այս ծակիէն կը դիմէր Պօմօն թէ ինչպէս կերակուր ստամորսին մէջ կու զար, օճապոյց շարժում-

Բորակածնաւոր մասը ստամորսին մէջ կը մարսուի:

Գ. Ճարպական մաս, որ երեք տարերքներէ կը բաղկանայ, նման նշայական նիւթոց որք են. Բնածուխ, Զրածին և Թթուածին: Ճարպական նիւթերն են ճարպերը, եղերը և այլն:

Ճարպական մասը աղեաց մէջ կը մարսուի: Նշայական եւ ճարպական նիւթերը նշողութեան ծառայով նիւթեր ըլլալով՝ կըսուին ննշողական նիւթեր: Սոք կըսեք մեր ներքին աճման չժառայենան համար, ուեւ մնունդ չեմք կընար տռնուել:

Հ. Մնունդը կամ կերակուրը ի՞նչ փոփոխութիւններ կը կը:

Պ. Կերակուրները զորո կառնուին՝ շատ փոփոխութիւններ կը կրեն մինչեւ որ պատրաստուին կազմել մարմնոյ զանազան մասերը: Հաստատոն բաները կը փոխուին ի հեղանիւթեւ այն մասերը որ մարմնոյն սնունդ կ'ուտան կը զառուին անպիտան նիւթերէն:

Ներ կ'ընէր, ստամորսին որմունքներուն կը բռուէր, ստամորական հիւթին նես կը խառնուէր եւ կը հալէր, կազմելով աղտոս կաթի զունով հեղուկ մը, զոր բնագէտը խախաց (շհցու) անոնը կու տան: Մասնաւոր զորդիրով մը Պօմօն ստամորական հիւթէն թիչ մը դուրս առաւ, ծեծած կովու մսի նես խառնեց, վրան զոցեց եւ ստամորսին տաքութեան չափ տաքուց. եւ անա տեսաւ որ միսը ինքնիւթեն կը հալէր:

Հ. Վերոյիշեալ փոփոխութիւնք քանի՞ են,  
և ի՞նչ կը կոչուին:

Պ. Կերակուրը մարմնոյն աճման նպաս-  
տելու համար հինգ փոփոխութեանց ենթա-  
կայ է:

Ա. Առաջն փոփոխութիւնը որ բերնին մէջ  
ատամանց և առղին գործողութեամբը կ'ըլլոյ՝  
կը կոչուի Տողկախառնուրին:

Բ. Ստամոքսին և մարսողական հիւթին  
գործողութեամբ կ'ըլլոյ եւ կը կոչուի Խախա-  
ցումն:

Գ. Նախաղւոյն մէջ մաղձի և պանկրատի  
հիւթոյն գործողութեամբ խախացը կը փոխ-  
ուի մամացի. այս կը կոչուի Մամացումն:

Դ. Կաթներակներուն և մամացի անցքին  
գործողութեամբ ինչպէս նաև սրտի, թոքի եւ  
օդի միջոցաւ մամացը կը փոխարկի յարիւն եւ  
այս կ'ըսուի Գոյացումն արեան:

Ե. Անպէտ նիւթը մամացէն զատուելով  
կ'արտաքսուի:

Զ. Կերակուրն ի՞նչպէս բերնէն ստամոք-  
սը կանցնի:


Պ. Կերակուրը բերնին մէջ մանելէ յետոյ  
ատամանց միջոցաւ կը փշուի և այս գործո-  
ղութեան կ'ըսուի Մամողուրին: Մամողու-  
թեան միջոցին ճարակը կը խառնուի լորձեան

գեղձերէն դոյացեալ թուքին կամ տողուկին  
հետ, որ կը թրջէ և կը կակղացնէ զկերակուրն  
զայն լարձուն վիճակի մը վերածելով. այս գոր-  
ծողութեան ևս կ'ըսուի Տողկախառնութիւն:  
Ճարակը փշուելով և տողկին հետ խառնուե-  
լով կը կազմէ լարձուն գունդ մը, որ բերնին  
ետեւ գտնուած Քմաց առագաստը կը հրէ.  
սա հորիզոնական վեր ելլելով ճարակին ազատ  
անցը կը թողու և քթին ետեւի ծակերը կը գո-  
ցէ. նոյն միջոցին շնչափողը կը բարձրանայ եւ  
Մակալեզու ըսուած փոքրիկ լեզուն շնչափո-  
ղին ծակը կը գոցէ որպէս զի ճարակը ոչ շնչա-  
փողին և ոչ ալ քթին ետեւի ծակերուն մէջ մըտ-  
նէ, այլ ուղղակի որկորին մէջ սահի (բերնին ե-  
տեւի կողմը որ Ըմբան կ'ըսուի, տեսակ մը գոեհ  
է որ և անցք ունի, որք են բերնին, քթին ետեւի,  
շնչափողին վերին եւ որկորին անցքերը) և այս  
գործողութիւն կը կոչուի Լյանողութիւն: Կլա-  
նողութիւնը վատանգաւոր կ'ըլլայ երբ շնչափողին  
ծակը լաւ չը գոցուիր. ուստի կերակուր ուտե-  
լու ժամանակ մեծ ուշադրութիւն ընելու է:

Կերակուրը որկորին որտածակէն այնելով կը  
մտնէ ստամոքսին մէջ:

Հ. Կերակուրը ստամոքսին մէջ ի՞նչպէս կը  
մարտուի:

Պ. Մամուած եւ տողկին հետ խառնուած



Ներքին գործարանաց ամբողջութիւնը : 4, 1, 1, 4, 1, անշաղ մկանուններ : 2, 2, 2, 2, Կողեր : 3, 3, 3, Այլ բոփին վերի, միջին եւ ստրին մասեր : 4, 4, Զախ բոփին մասեր : 5, Մրժին աչ սինձար : 6 Զախ սինձար : 7, Մրժին աչ բրակը : 8, Զախ բրակը : 9 Թռին և նշերակը : 10, Արև և նշերակ : 11 Երակախին ար- ինք սիրտ սակող մեծ երակը : 12, Խոչափող : 13, Ուկոր : 14, 14, 14, 14, Փղիկն կոչուած բռնախին բրականը : 15, 15, 15, Սոսնախի : 16, 16, Լերդի աչ եւ ձախ մասեր : 17, Լեզպաստիկ : 18, Սամանս : 26, Փայծաղ : 19, 19, Նախաղի : 20, 21, 25, Թանձ աղեաց մասեր : 22, 22, 22, 22, Ըուրբ աղիք : 24, Մա- մացի անցի :

կերակուրը ստամոքսին մէջ իջնելով, սորտ կը ծ-  
կուրելով և բացուելովը կ'սկսի անդ օձուգոյտ  
շարժումներ առնուլ, ձախէն աջ և աջէն ձախ։  
Այսպէս կերակուրը Յ Ժամու չափ ստամոքսին  
դեղձիկներէն դոյացեալ մարսողական հիւթին  
հետ խառնուելով կը ձեւացնէ կակուլ նիւթ-  
մը, որ կը կոչուի Խախաց։

Հ. Խախացը ի՞նչ կ'ըլլայ և ի՞նչի կը փոխուի:

Պ. Այս կակուղ և գորշ նիւթը ստամբուէն  
կ'անցնի նախադին, և մաղձին եւ պանկատի  
հիւթին հետ կը խառնուի օձապայտ շարժում-  
ներ կատարելով։ Այսպէս խախացը երկու մա-  
սի կը բաժնուի. մին՝ որ կ'ըլլայ կաթի պէս  
նիւթ Մանաց(\*) կը կոչուի, իսկ միւսը՝ Մնա-  
ցորդ կամ անպիտան նիւթ։

(\*) Մամացը (chyle) խորշագոյն սպիտակ հեղուկ մէէ, որ արեգական ճառապայթից ազդեցութեամբը թեթեւ իմն կը կարմի. եւ եթէ ամանի մը մէջ հանդարտ Թողունք կը մակարդի, այսինքն երկու մասի կը բաժնուի: Տակը Թանձն մարմնն մը կը նստի եւ ասոր վրայ հեղուկ կը մնայ. ամանին տակը գտնուած մակարթին մէջ զնդիկներ կը զժնուին: Եթէ աւելի շղերով մամացին վրայ զարնենք, շղերուն վրայ ներմակ թեկեր կը ժողովուին եւ մնացեալ հեղուկը մակարթուելու յատկութիւնը կը կորուսանէ: Վերոյիշեալ փորձերը նոյնութեամբ կրնան կատարուիլ արեան վրայ, որով կը հետեւի թէ մամացը արեան շամը յատկութիւններ ունի, այսինքն կարող է դիւրաւ արեան զառնալ. եւ իրօք մամացն է որ շարունակ արեան փոխուելով սրտին եւ թոքերուն մէջ, կը ծառայէ մեզ սնունդ տալ եւ մեր ներքին կորուսները զարմանել :

Մամացը և մնացորդը նախաղիէն կ'անցնին  
նուրբ աղեաց մէջ, և անոր գալարող դործո-  
ղութեամբ կը քշուին յառաջ:

Հ. Ի՞նչ կ'ըլլայ մամացը և ի՞նչի կը փոխուի:

Պ. Երբ կերակուրը ստամոքսին և աղեաց  
մէջ հետզետէ մարսուի և դառնայ մամացի,  
նուրբ աղեաց որմունքներուն վրայ դտնուած  
մազանման բարակ խողովակներէն (կաթներակ)  
կը ծծուի: Այս խողովակները հետզետէ իրա-  
րու հետ միանալով աւելի քիչ բայց աւելի  
հաստ խողովակներ կը կաղմեն, որք վերջապէս  
կը յանդին կուրծքին ետեւը դտնուած կան-  
չական խողովակին մէջ. լանջական խողովակը  
կը ծուի գէպ ի ձախակողմ և անբակին տակ  
դտնուած երակին մէջ կը վերջանայ. սա եւս  
դէպյաջ ընթանալով կը վերջանայ Վերին գո-  
գերակին մէջ որ սրտին աջ կողմի բլթակին մէջ  
կը յանդի: Մամացը ուրեմն կաթներակներու  
միջոցաւ մազականութեամբ և ներհոսմամբ  
կ'երթայ սրտին մէջ, ուստից թոքերուն մէջ անց-  
նելով՝ օդին միջոցաւ կ'ըլլայ արիւն:

Իսկ մնացորդը (Քնչան) հաստ աղեաց մէջ  
կ'երթայ, և կ'ելլէ արտաքս:

ԳԼՈՒԽ Ը.

### ՍՇՈՒՄՆ ԵՒ ԶԱՏՈՒՄՆ

Հ. Ի՞նչ է Ծծում և Զատում:

Պ. Ծծումն է կերակրոյ սննդարար մասն-  
կանց՝ ֆասովակար և անօգուտ նիւթերէն զատ-  
ուելով, երակներէն ծծուին: Իսկ զատուելու  
դործողութեան ևս կ'ըսուի Զատումն:

Հ. Որո՞նք են ծծիչ անօթք:

Պ. Այն անօթք, որք կ'ընդունին մի միայն  
մամաց և հետեւարար մարմնոյն աճման եւ  
մնուցման կը ծառային, կ'ըսուին Կաթներակ.  
Իսկ նոքա որք ընդհակառակն անօգուտ նիւ-  
թերը բառնալու կը նպառտեն, կ'ըսուին Աւշոյ  
անօթք:

Հ. Զատիչ գործարանք քանի՞ տեսակ են:

Պ. Զատիչ գործարանք բաղմաթիւ են. և  
սովորաբար երեքի կը բաժնուին. 1° Ծորակիկ,  
2° Քաակ և 3° Գեղճ:

Հ. Ի՞նչ են Ծորակիկը, Քաակ և Գեղճերը:

Պ. Ծորակիկը՝ չնչերակաց ծայրի մազակերպ  
անօթներն են: Քաակներն են մորթին ներքին  
կողմը դտնուած մանր անօթներ. Իսկ Գեղճերն  
որք զատիչ գործարանաց գլխաւորներն են:

Հնչերակներէ, երակներէ և խողովակներէ նըրբակերտ յօրինուած և տարբեր մեծութեամբ սպնդածե մարմիններ են:

Հ. Զատիչ գործարանք միհնոյն հիմնին կ'արտադրեն:

Պ. Յայտնի է թէ մարմնոյն բոլոր հեղուկները արիւնէն կը բղպին. արդ երբ այս հիմքը զատիչ գործարանաց մէջ կը մտնէ, միհնոյն բաղադրութիւնն եւ յատիւթիւնն ունի. այլ սակայն գեղձերը զայն տարբազադրելով բոլորվին տարբեր հիմքեր կ'արտադրեն. զարօրինակ, լրճեան գեղձը կը զատին անհամ լորձիւնը. Եւարդը՝ գեղին և թանձը մաղձը, և Երիկանութիւնը կծու Մեռը, և որ ի կարգին:


Երբ անպէտ նիւթ մը աւշոյ անօթներով արեան մէջ կը մտնէ, զատիչ գործարանք զայն կը մերժեն ի բաց:

### ԳԼՈՒԽ Թ.

### ԱՐԻԿՆ

Հ. Ի՞նչ է Արիւնը:

Պ. Արիւնն է մեր մարմնոյն մէջ գտնուած այն անդարբար և ամենակարեւոր հեղուկը որ



1, 2, 3, 4, 5, 6, Ստորին անդամոց աւելյ անօրներ եւ զեղաներ; 7, Աւելյ զեղաներ; 8, Մամացի անցքին սկիզբը; 10, Ստամունիքի 11, Լեռդի 13, 14, 15, Բազկի 16, 17, 18, Երեսի եւ վզի՝ եւ 26, Մրժի աւելյ անօրներ; 12, 12, Թոփեր; 19, 20, Հաս երակներ:

կենսապահ ջերմութեանց, զօրութեանց և հետեւարար կենաց աղբիւրն է :

Հ. Արիւնը քանի՞ մասերէ կը բազկանայ :

Պ. Երակի մը մէջէն երբ ամանով արիւն առնումք եւ հանդարտ թողումք իսկոյն կը փառանայ, կը մակարթի՝ այսինքն տակը կարմրագոյն թանձր մաս մը կ'իջնէ որ Փսոր կ'ըսուի. իսկ վրան դեղնագոյն հեղանիւթ մը կը մնայ որ Շիճ կամ Շճուկ կը կոչուի :

Երբ ցախի շլղերով արեան մէջ դանուած բնանեարդը (Ճերմակթելերը) վերցնենք, արիւնը մակարթուելու յատկութիւնը կ'կորուսանէ :

Հ. Ի՞նչ է արեան դոյնը :

Պ. Մարդկանց արեան դոյնը կարմիր է, սակայն մարմնոյ յօդուածներուն և կապերուն մէջ արիւնը չէ կարմիր՝ այլ սպիտակ :

Հ. Արեան կալմբագոյն լինելուն պատճառն ի՞նչ է :

Պ. Արեան դոյնը կարմիր է, որովհետեւ արեան մէջ կը դանուին գունաւոր մանր դընդիկներ՝ որը կը կ'չուին Արեան կայլակ :

Հ. Արիւնը ինչէ բազագրեալ է :

Պ. Արիւնը բազագրուած է հետեւեալ տարերէ՝ որք են .

Ս. — Հանքային նիւրեր. ինչպէս ջուր, զանազան աղեր և զանազան կազեր :

Բ. — Շաբարային նիւրեր :

Գ. — Նեայական նիւրեր :

Դ. — Գործարանական անմիջական տարեր. ինչպէս բնանեարդը (որ ալպիւմինի բազագրութիւնն ունի, մասն կարեւորագոյն մասը կը կազմէ), բնասպիտակը (որ առաջին տարեր հետ կը կազմէ ներքին մեծագոյն մասերը), բնամիս, բնոսկը, բնաճառ, ևայլն. ևայլն :

Արիւնն և ջուրը, մարդուս ծանրութեան չորս հինգերորդ մասը կը կազմեն. իսկ արեան 1000 մասունք կը պարունակեն.

Զուի ճերմակ (ալպիւմին)	67
Արեան կայլակը	431
Բնանեարդ (Ֆիպրին)	3
Ճարպ	4
Զանազան աղեր	6
Ջուր	789
	1000 մաս :

Արիւնը պարունակելով մեր կենաց անհրաժեշտ եղող վերոյիշեալ տարերքը, կ'արդարացնէ իւր անունը, իբր մննդաբար և կենսապահ հեղուկ :



ԳԼՈՒԽ Ժ.

ԱՐԵԱՆ ՇՐՋԱՆ

Հ. Ի՞նչ է Արեան շրջանը :

Պ. Արիւնը լինելով մեր կեանքը պահող և միանգամայն մեր ներքին կորուստը լեցնող հեղուկը, պէտք է որ մեր մարմնոյն ամէն կողմն ընթանայ և ամէն մասանց պէտքը լրացընէ. ասոր համար է որ Բնութիւնը դրած է մեր մարմնոյն մէջ մասնաւոր գործարաններ որք արիւնը մարմնոյն ամէն կողմը կը տարածեն: Այս գործարանաց ամրողջութիւնը կ'ըսուի Շարուած արեան շրջանի:

Հ. Արեան շրջանի սարուածը քանի մասէ կը բաղկանայ :

Պ. Երկու մասէ, Կեդրոնական և Շրջանական: Կեդրոնական մասն է Սիրտը. իսկ շրջանական մասերն են, Շնչերակը, Երակը և Մազակերպ անօթք :

Հ. Ի՞նչ է Սիրտը և ուր կը դանուի :

Պ. Սիրտը՝ որ մին է ամենափափուկ և ամենակարեւոր գործարանաց, բռան մեծութեամբ մնուած պարկ մ'է, և կը դանուի վանդակին թոքերուն մէջաեղ, դէպ ի ձախակողմ ծռած :

Հ. Սիրտը քանի խորչերէ կը բաղկանայ :

Պ. Սիրտը չորս խորչերէ կը բաղկանայ ուրոց երկու վերիններուն կ'ըսուի Բյրակ, իսկ երկու վարի խորչերը՝ Խիճճք, Աջ բլթակը եւ խինձը ձախ բլթակէն և խինձէն բաժնող մկանը կը կոչուի Միջնորմ, իսկ բլթակները խինձերէն զառաղ թաղանթային մասը կ'ըսուի Դոմակ:

Ոչ բլթակները իրարու հետ և ոչ ալ խինձերը իրարու հետ հաղորդակցութիւն ունին, այլ սրտին աջ բլթակը աջ խինձին հետ կը հաղորդակցի երեք գոնակներով, որք կը կոչուին Եռապատիկ. Խոյնպէս սրտին ձախակողմեան բլթակը կը հաղորդակցի ձախ խինձին հետ երկու գոնակներով, որք կը կոչուին Միթրաձեւ :


Հ. Ի՞նչ են չնչերակք :

Պ. Շնչերակ կ'ըսուի այն առածգական խոզվակներուն, որք արիւնը սրտէն մարմնոյն բոլոր կողմը կը տարածեն: Աջ խինձէն կ'ելլէ Թոփային շնչերակը. ձախ խինձէն մեծ չնչերակ մը կ'ելլէ, որ կը կոչուի Արմ շնչերակ: Սոյն երկու անօթներուն սկիզբը կան դանակներ, որ իրեանց երեւոյթին համեմատ կը կոչուին Կիսաբոյրակ:

Հ. Նկարագրէ թոքային շնչերակը :

Պ. Թոքային շնչերակը արմ շնչերակին առ-

ջեւէն կ'սկսի, անուղղակի կ'ելլէ մինչեւ արմ շնչերակին կամարաձեւ մասը, եւ յետոյ երկու ծիւղի կը բաժնուի: Մին կ'անցնի աջ թոքը, և միւսը՝ ձախ թոքին մէջ: Անդ մազանման բարակ շնչերակիներու կը վերտծուի, որք կը հաղոր-



1. Խոչափոր; 2. Սիրմ շնչերակ; 3. Թոքային շնչերակ; 4. Զախ բռին մէջ բաժնուած բռային շնչերակի նիւղ: 5. Աջ բռին մէջ բաժնուած նիւղ: Վերյիշեալ նիւղեր արիւնը կը տանին բռին եղեւաց վերայ տեսնուած բիծեր, որք օդոյ նուրք խորչեր են:

դակցին նրբին երակներու հետ. այս երակները հետղինետէ միմեանց հետ միանալով, կը հաստընան և կը կազմեն չորս ճիւղեր որք կը վերջանան ձախ բլթակին մէջ:

Այսպէս թոքային շնչերակը սև կամ երակային արիւնը կը տանի թոքերուն մէջ, և այս կը կազմէ իրեն յատուկ երակներով, թոքային շրջանը:


Հ. Նկարագրէ արմ շնչերակը:

Պ. Արմ շնչերակը որ սրտին ձախ խնձէն կը ծագի, կը պարունակէ մաքուր կամ շնչերական արիւն: Արմ շնչերակը սրտին վրայ կամար մը կազմելով ետեւի կողմը կ'անցնի և կը բաժնուի գլխաւոր երկու ճիւղերու, մին սրտէն վեր գըտնուած մասերուն և միւսը սրտէն վար գանուած մասանց մէջ կը տարածուին հետղինետէ բարակ և բազմաթիւ ճիւղերու բաժնուելով. եւ կը վերջանան բարակ թելերով ուր կ'սկսին մազանը երակներ, որք հետղինետէ իրարու հետ միանալով կը հաստանան և վերջապէս կը վերածուին երկու հաստը երակներու որք կ'ըսուին վերին և ստորին Գոգերակ, և կը վերջանան աջ բլթակին մէջ:

Արմ շնչերակը իրեն վերաբերեալ երակներով կը կազմէ Ընդհանուր շրջանը:

Հ. Ի՞նչ են երակիք:

Պ. Երակ կ'ըսուի այն խողովակներուն որք թոքերուն կամ մարմնոյն ուրիշ մասանց մէջ շրջան ըրած արիւնը կը բերեն սրտին բլթակաց մէջ:



Արեան ընդհանուր ցոշանը, Արմ ընչերակի սկզբը:

Հ. Ի՞նչ են մազակերպ անօթք:

Պ. Մազակերպ անօթները որք կը նպաստեն չնչերակներուն եւ երակներուն հաղոր-

դակցութեանը, կը կազմեն մարմնոյն ամէն մասանց մէջ ամենանուրբ ցանցակերպ մը:

Հ. Արիւնը քանի և ի՞նչ փոփոխութիւններ կը կրէ:


Պ. Արիւնը երկու փոփոխութեանց ենթակայ է: Մին կ'ըսուի Շնչերակային կամ Մաժուր արիւն, իսկ միւսը՝ Երակային կամ Անմաժուր արիւն: Շնչերակային արիւնը թոքին մէջ կենսապահ եւ մնդարար յատկութիւններ առնելով արմ շնչերակին միջոցաւ կը տարածուի մարմնոյն ամէն կողմը մնունդ բաշխելու: անդ կորսնցնելով իւր մնդարար յատկութիւնները՝ կը գերածի երակային արեան, որ գոգերակաց միջոցաւ սրտին աջ խնձէն կ'անցնի (մամացին հետ խառնուելով) թոքերուն մէջ ուր կը փոխուի շնչերակային արեան:

Հ. Ի՞նչ է սրտի բաղխումը:

Պ. Սրտի բաղխումն է, սրտին մկանանց կծկելով և բացուելովը յառաջ եկած շարժումը: Սիրտը շնչերակներու միջոցաւ արիւնը կը մղէ մարմնոյն մէջ, որով ամէն անդամերը սիրտը կը կծկի, շնչերակները կ'ստանան բաղխում: Ճիշդ սրտին այս բաղխումն է որ ամենուս ծանօթ է և կը կոչուի Բազկազարկ (Ասճա) որոյ միջին բաղխումն է առողջ մարդու մը համար մէկ վայրկենի մէջ գրեթէ եօթանասուն անդամ:

Հ. Արեան շրջանը քանի մասի կը բաժ-  
նուի:

Պ. Արեան շրջանը երկու մասի կը բաժնուի.  
մին կ'ըսուի Մեծ շրջան և միւսը՝ Փոքր շրջան:



Մեծ շրջանն է արեան այն ընթացքը որ կը կատարուի ձախ խնձէն աջ բլթակին մէջ: Խոկ փոքր շրջան կ'ըսուի արեան այն ընթացքին, որ կը կատարուի աջ խնձէն ձախ բլթակին մէջ:

Հ. Խնձու կը կատարուի արեան շրջանը,  
նկարագրէ զայն:

Պ. Երբ երակային կամ անմաքուր արիւնը  
մամային հետ աջ բլթակին մէջ (1) կը հոսէ,  
սա (բլթակը) կ'ուռի և այն ատեն արիւնը ճըն-  
շելով կը բանայ եռապատիկ ըսուած (17) դըն-  
ակները և կը վաղէ աջ խնձին (2) մէջ. Խինձը  
կ'ուռի և բլթակը կ'ամփոփի. աստի սրտին աջ  
խինձէն անմաքուր արիւնը կը մղուի թոքային  
շնչերակին մէջ (3). Խինձը կ'ամփոփի իսկ  
բլթակը արեան նոր հօսանքով մը կ'ընդլայնի.  
որով բլթակներուն ընդլայնած ժամանակ կ'ամ-  
փոփին խինձերը եւ փոխադարձաբար: Արդ  
աջ խինձէն մղուած անմաքուր արիւնը թոքային  
շնչերակին ճիւղերով (4,5) կը տարածուի աջ և  
ձախ թոքերուն մէջ: Թոքերուն մազակերպ ա-  
նօթներուն մէջ (6,6) արիւնը կը մաքրուի օդոյ  
միջոցաւ, կարմիր գոյն մը կ'սատանայ, և երակ-  
ներուն (7,8) միջոցաւ կը տարուի սրտին ձախ  
բլթակը (9): Ձախ բլթակը կ'ուռի եւ այն ա-  
տեն մաքուր արիւնը ճնշելով կը բանայ միթ-  
րածեւ գոնակները (10) եւ կը վաղէ ձախ  
խինձին (10) մէջ: Խինձը կ'ուռի և բլթակը կ'ամ-  
փոփի, ուստի երբ ձախ խինձը ուժգին կը կծկի  
արիւնը կը մղուի արմ շնչերակին (11) մէջ, և  
ասոր ճիւղերը (12, 13, 13,) մաքուր արիւնը

կը տանին մարմնոյն բոլոր գործարանաց մէջ։  
Արմ չնչերակին բաժանումներն եւ ստորաբաժանումները (14, 14) կը վերջանան մաղակերպ անօթներով։ Այս մաղի նման անօթներուն մէջ արիւնը կ'ստանայ մոթ գոյն եւ կը տարուի (15, 16) մեծ երակաց միջոցաւ սրտին աջբըլթակին մէջ։ Աջ բլթակը իւր ընդունած արեան այս նոր հոսանքը ըստ առաջնոյն կը զրկէ աջ խնձին մէջ, սա ալ՝ թոքային չնչերակին մէջ եւ որ ի կարգին։ Եռապատիկ դռնակները (17) կ'արգելուն արեան ետ հոսումը աջ խինձէն գէպ յաջ բլթակը։ Կիսարուրակի դռնակներն (18) կ'արգելուն արեան հոսումը թոքային շընչերակէն գէպ յաջ խինձը։ Միթրաձեւ դռնակները (19) կ'արգելուն արեան դառնալը ձախ խնձէն գէպ ի ձախ բլթակը։ Կիսարուրաձեւ դռնակները (20) կ'արգելուն արեան դառնալը արմ չնչերակէն գէպ ի ձախ խինձը։

Հ. Վերոյիշեալ ծանօթոթիւններէն ի՞նչ կը հետեւի։

Պ. Վերոյիշեալ ծանօթոթիւններէն կը հետեւի ուրեմն թէ սիրտը՝ որ միլչ գործիք մ'է, արեան շրջանի կեդրոնն է և թէ սրտին չորս խորշերը հաւասարապէս ոյժ չ'ունին։ Ամենէն զօրաւորն է ձախ խինձը, որովհետեւ միւսներէն շատ աւելի հեռու պիտի մղէ արիւնը, այ-

ախնքն մեծ շրջանի մղիչն է, յետոյ կ'ու գայ աջ խինձը որ փոքր շրջանի մղիչն է, և վերջապէս ձախ բլթակը և ապա աջ բլթակը որոց ուժը նուազ է։

ԳԼՈՒԽ. ԺԱ.

## ՇՆՉՈՂՈՒԹԻՒՆ

Հ. Ի՞նչ է շնչողութիւնը։

Պ. Շնչողութիւնն է այն գործողութիւնը որով օդ առնելով՝ թոքերուն միջոցաւ ապականեալ արիւնը կը զառւի անպիտան և անօգուտ (ածխային թթու) մասնիկներէ։ Շնչողութիւնն է ուրեմն մամացը յարիւն, ինչպէս նաեւ երակային արիւնը չնչերակային արեան փոխարկողն։ Այս գործողութիւնը կը կատարուի Շըմչողական գործարակաց միջոցաւ։


Հ. Ո՞րո՞ք են շնչողական գործարակք։

Պ. Շնչողական գործարաններն են. 1° Թոթերը, 2° Խոյափողը, 3° Խոյափողոյ միսերը, 4° Օղոյ փամկուշները և 5° Սոնձանին։

Հ. Ի՞նչ են թոքերը։

Պ. Թոքերը վանդակին ներքին երկու կողմը զետեղուած սպնդանման, կոնաձեւ, կարմրասպիտակ լոյդ մը պարկեր են, որք կը

պատեն սիրտը և իրազմէ կը բաժնուին գլխէ  
կոչուած թաղանթով մը: Թոքերը ձեւացած են  
օդոյ բազմաթիւ (2000) խորշերէ, որոց մէջ կը  
վերջանան երակի և շնչերակի նրբին ծայրեր:



1, 1, 1, Աջ բռք: 2, 2, 2, Զախ բռք: 3, Շնչափող: 4, Խրա-  
չափող: 5, Խոչափողյ աջ ճիւղը: 6, Խոչափողյ ձախ ճիւղը:  
7, 7, 7, 8, 8, Սանր ճիւղը: 9, 9, 9, 9, 9, 9, Օդոյ փամփուէս:

Հ. Ի՞նչ է Խոչափողը:

Պ. Խոչափողը թոքերը իրարու միացնող  
կոճիկ օղակներէ ձեւացած խողովակ մ' է, որ

բերնին շնչափող կոչուած մասէն սկսուելով  
վզին առաջակողմէն կ'երկնայ մինչև թոքերը:  
Հ. Ի՞նչ են խոչափողյ ճիւղերը:

Պ. Խոչափողյ ճիւղերն են խոչափողին վա-  
րի ծայրին երկու մեծ բաժանումները, որոց  
իւրաքանչիւրն մէն մի թոքին մէջ ծառանման  
կը ճղանայ:

Հ. Ի՞նչ են օդոյ փամփուշտք:

Պ. Օդոյ փամփուշտք են ծառանման ճիւ-  
ղերու նրբին ծայրերը:

Հ. Ի՞նչ է ստոծանին:

Պ. Ստոծանին՝ կակուղ զմբեթաձեւ թա-  
ղանթ մ' է որ կը զատէ շնչողութեան գործա-  
րանները մարսողական գործարաններէն, եւ  
վանդակը՝ փորէն: Ստոծանւոյն եղերքը փա-  
կած է վանդակին մասանց:

Հ. Շնչողութիւնը քանի գործողութիւննե-  
րէ կը բաղկանայ:

Պ. Երկու, այսինքն՝ Շնչառութիւն և Շնչ-  
առուութիւն, որոց երկուքին մէկէն կ'ըսուի  
Տուրեւառ շնչոյ:


Հ. Ի՞նչ է շնչառութիւնը եւ ինչպէս կը  
կատարուի:

Պ. Շնչառութիւնը՝ որ է մաքուր օդոյ կի-  
րառութիւն առ ի զտումն ապականեալ արեան,  
կը կատարուի հետեւեալ կերպիւ, երբ օդ կը

Հնչուի՝ ստոծանւոյն եզերը կը կծկին, միջին  
մասը կը ճնշուի և լանջական վանդակը կ'ըն-  
դարձակի կողերը վեր բռնող մկանանց ամ-  
փոփմամբ։ Վանդակին ընդլայնմամբ՝ թռքերն  
ևս կ'ընդարձակին, որովհետեւ օդոյ խորշերը

Ա

Բ



Ա. Շնչառութեան ժամանակ վանդակին ձեւը։ 1, Ստոծանի։  
2, Փորի մկանական որմունք։  
Բ. Շնչառութեան ժամանակ վանդակին ձեւը։ 1, Ստոծանի։  
2, 2, Փորի մկանական որմունք։

Կը լեցուին. ընդհակառակն վանդակին անփոփ-  
մամբ՝ թռքերն կը կծկին, զի օդոյ փամփուշտը  
կը պարպաւին։ Յայնժամ օդը լերնէն և քթէն  
կը մտնէ խոչափողին եւ անոր ճիւղերուն մէջ,  
որով թռքերը կը լցուին օդով։

Հ. Ի՞նչ է շնչառութիւնը և ի՞նչպէս կը  
կատարուի։

Պ. Շնչառութիւնը՝ որ է արտաքսումն  
ապականեալ օդոյ, կը կատարուի հետեւեալ  
կերպիւ։ Վանդակին լայնալէն զկնի կողերը  
բարձրացնող մկունք եւ ստոծանին կը թռւլա-  
նան որով վանդակը հետզհետէ կը կծկի։ Այս-  
պէս թռքերէն մաս մը օդ դուրս կ'ելլէ, և միե-  
նոյն ժամանակ ստամոքսը, լեարդը եւայլք  
ստոծանին կը ճնշեն. սա վեր կ'ելլէ թռքերն ալ  
իրեն հետ վեր քշելով, որով օդին ապականեալ  
մասունքը հետզհետէ կ'արտաքսուին։

Հ. Մաքուր օդը ի՞նչ կը պարունակէ։

Պ. Որպէս զի մարդ վայելէ կատարեալ ա-  
ռողջութիւն, պէտք է մեծ խնամ տանիլ շնչելի  
օդոյ մաքրութեան։ Մթնոլորտին մաքուր օդը  
կը պարունակէ 21 առ. % թթուածին և 79 առ.  
%. Անկենդան կազ, կեանքը պահողը թթուա-  
ծին է, իսկ անկենդան կազը՝ թէև առանձին  
կենաց սպառիչ, սակայն թթուածին հետ միա-  
նալով մեծապէս օգտակար կ'ըլլայ։

Հ. Օդը ինչպէս կը զտէ զարիւնն։


Պ. Երբ ապականեալ արիւնը օդոյ փամ-  
փուշտներէն կ'անցնի, կը մրանայ թթուածնի  
հետ։ Յայնժամ ապականեալ մասունք (ածխային  
թթու և ջրային գոլորշիք) արիւնէն կը զատուին

և կը խառնուին օդոյ փամիուշտներուն մէջ գըտնուած արտաշնչելի օդոյն հետ։ Շնչողութեան ժամանակ, յիշեալ վնասակար նիւթերը կ'արտաշնչուին, և արիւնը զտուելով՝ կ'առնու կարմիր դոյն և կը վերադառնայ իւր կենսապահ գերը շարունակելու (\*):

#### Հ. Ուստից կը դոյանայ թթուածին։

Պ. Այսպէս շարունակ թթուածին շնչելով և բնածխական թթու արտաշնչելով՝ մթնոլորտը պիտի կորանցնէր իւր բոլոր թթուածինը և պիտի լիցուէր բնածխական թթուով, որովանշշնչելի պիտի լինէր կենդանեաց համար. սակայն կանխագէտն բնութիւն այս անպատե-

(\*) Արեան՝ օդոյ ազդեցութեամբ մաքրուիլը, ինչպէս նաև թթուածինի շնչողութեան ծառայելը, առաջին անգամ հասաւած լավուազիկ։ Սորա կարծեաց համեմատ, օդը՝ թոքերուն մէջ եկած երակային արեան աւելորդ նիւթերը, ինչպէս բնածուի եւ այլն, կ'այրէ իւր թթուածնի միջոցաւ։ Եւ ահա այսպէսով կը դոյանայ բնածխական թթու, որ օվին բորակածինին հետ դուրս կ'արտաքիս։ Բայց յետոյ, նւեյնմիտւորդ ստուգեց, թէ այս այրեցումը կը կատարուի ոչ թէ անմիջապէս թոքերուն մէջ, այլ երակային արիւնը թոքերուն մէջ դեռ եւս չ'եկած կը խառնուի թթուածնի հետ, եւ արեան ամբողջ շրջանին մէջ թթուածնը դէմք եկած աւելորդ բնածուիլը կ'այրէ եւ կը կազմէ բնածխական թթու։ հետեւապէս արեան թթուածինը կը նուազի հետքինետէ մինչզեռ կ'աւելնայ բնածխական թթուն։ Այսպէս արիւնը իւր կենսապահ յատկութիւնները կը կորսնցնէ եւ թոքերուն մէջ հասնելով՝ դուրս կ'ուտայ բնածխական թթուն, եւ միեւնոյն ժամանակ օդոյ նոր կիրառութեամբ արիւնը մաքրուելով՝ կը շարունակէ իւր պաշտօնը։




ԳԼՈՒԽ ԺԲ.

ԶԱՅՆ

- Հ. Ո՞րն է Զայնի դործարանը:  
 Պ. Զայնի պարզ գործարանն է Ենչափողը:  
 Հ. Ի՞նչ է Ենչափողը:  
 Պ. Ենչափողը՝ որ Հազար ևս կը կոչուի և  
 կը կազմէ խոչափողին վերի մասը, կը ծառայէ  
 ձայնը հանելու : Ենչափողը 16-20 մահկաձեւ  
 աճառներէ բաղկացեալ խողովակ մ' է, որ յօ-  
 դակապերով կը միանայ կճիղ ոսկեր հետ : Վե-  
 րոյիշեալ աճառներէ երեքը ամենէն մեծ են,  
 մանաւանդ վահանաձեւ ըսուածը՝ որ առջեւի  
 կողմը կը գտնուի և երբ քիչ մը ցցուած ըլլայ  
 կը կազմէ Աղամախնառը:  
 Հ. Որո՞ց կ'ըսուի ձայնական լարեր :

Պ. Ենչափողն վերի մասը՝ որ կ'ըսուի Զայ-  
 նարան, կը պարունակէ չորս թաղանթային  
 ծալքեր, դէմ առ դէմ երկու, այս ծալքերուն  
 կ'ըսուի Զայնական լարեր : Լարերուն մէջտե-  
 ղի միջոցին կ'ըսուի Բերան շնչափողի, իսկ լա-  
 րերուն կազմած խոռոչին եռողչ շնչափողի :

- Հ. Ո՞րն է մակալեզուն:  
 Պ. Մակալեզուն լեզուին արմատին ետեւի  
 կողմը գտնուող աճառի կտոր մ'է : Սա կ'արգե-



Ա. Լեզուին ոսկրէ արմատը: 3, 4, 5, 6, Ենչափողոյ անառ-  
 եր: 7, Ենչափող:

Բ. Ենչափողոյ հատումը: 1, 1, Վերին ձայնական լարերը:  
 2, 2, Ստորին ձայնական լարերը: 3, 3, Ենչափողոյ բերանը: 4,  
 4, Խոչափողոյ խոռոչը:

Ըստ կերակրոյ կամ ըմպելոյ անցքն ի ձայնարան:

Հ. Ի՞նչպէս ձայնը յառաջ կու գայ:

Պ. Երբ գուրս կը մղենք թոքերուն մէջի օ-  
 դը, յայնժամ ձայնական լարերը կը ճօճին, եւ  
 այս ճօճումէ յառաջ կու գայ ձայնը, Լեզուն՝  
 որ կերակրոյ համը առնելու կը ծառայէ, բարձ-  
 րագոյն նպատակ մը ունի, որ է նպաստել յօ-  
 դաւոր ձայնին կամ բարբառին . Հարկ չ'կայ  
 ըսելու թէ ատամանց, շրթանց, դէմքին զա-  
 նազան մկանանց ամփոփումն, ինչպէս նաեւ  
 մարմնոյն գանազան ձեւերն ևս կ'աղդեն ձայ-  
 նի ելեէջին :

ԳԼՈՒԽ ԺԴ.

## ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՄՆՈՅԻ

Հ. Ի՞նչ է յերաժիշտն մարմնոյ:

Պ. Մարմնոյ զերմութիւնն է մեր կենաց պահպանման, կանոնաւորութեան և յարատեւութեան համար հարկ անհրաժեշտ եղող բարեխառնութեան որոշ աստիճան մը :

Հ. Ի՞՞նչ է այդ աստիճանը :

Պ. Թէև կերակրոյ քանակը և որակը, տարիք, մարմնամարզ և այլք՝ կ'այլափոխեն ջերմութեան աստիճանը, սակայն թէ Ալբեցեալ և թէ Սառուցեալ Գոտոյ բնակչաց, մարմնոյ ջերմութեան աստիճանը ընդհանրապէս ֆարեն-հայնի ջերմաչափով՝  $98^{\circ}$  է:

Հ. Մարմնոյ մէջ ի՞նչպէս ջերմութիւն յառաջ  
կու գալ:

Պ. Երբ թոքային մաղակերպից մէջ չնչերա-  
կային արեան թթուածինը կը միանայ՝ ապա-  
կանեալ մասանց մէջ դտնուող ածխոյն և ջրած-  
նին հետ (որք մամացի միջոցաւ կը ներմու-  
ծուին մարմնոյ մէջ), կազմելով ածխային թթու  
և ջուր, մարմնոյն տարերաց այս փոփոխումէն  
կը ծագի ջերմութիւն, որ հետզհետէ տմբողջ  
մարմնոյ մէջ կը տարածուի:

Հ. Մարմնոյ ջերմութիւնը ի՞նչպէս հաւասարակշռութիւն կամ աստ

Պ. Մորթը շաբունակ դուրս կռ տայ Քիրտե  
կոչուած հեղանիւթ մը, որ գոլորշիանալով կը  
ցնդի: Այսպէս քրտինքը, իբր չափաւորիչ գոր-  
ծի իմն, ջերմութեան աւելորդ մեծ մասը մարմ-  
նէն դուրս կը հանէ, ջերմութեան չափը (98°)  
հաւասարակշիռ պահելով:

4602



## ՄԻ ՔԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ

---

Աղոսկ	Fémur	Պուտ ժկմիյի
Ազր	Cuisse	Դաշտ, պուտ
Ակռայ	Dent	Տիշ
Աղիք, ընդերք	Entrailles	Պաղրսագ
Անդամ	Membre	Ազա
Անդամագնութիւն	Anatomie	Թէշրիհ
Անդամալուծութիւն	Paralysie	Թհօրիւմիհեր
Առողջաբանութիւն	Hygiène	Իլմի սահմար
Արիւն	Sang	Գակ
Արմկոսկ	Ulna	Տիրուկ ժկմիյի
Արմ ժնչերակ	Aorte	Շահ տամար
Արմուկ	Coude	Տիրուկ
Աւիս	Sanie	Իրին
Ափ	Métacarpe, paume	Ավուն
Բազկերակ	Pouls	Նապգ
Բազկոսկ	Humérus	Գոլ պաշը ժկմիյի
Բրամա, բոյք	Pouce	Պաշ փարմագ
Բիբ	Prunelle, pupille	Կեօգ պեպիշի
Բնազդումն	Instinct	Սկվզի բապիյիկը
Գանկ	Crâne	Դամա ժկմիյի
Գեղձ	Glande	Եր պէզզի
Գոզաւոր	Concave	Միւզաւար
Գաստակ	Poig, carpe	Պիտիք
Երակ	Veine	Տամար
Զգայարան	Sens	Հիսուս

Թարք	Métatarsé	Այսպ բարաղը
Թիկունիք	Dos	Սլրը, արզա
Թողանիք	Diastole	Եիրկ կենիշնենիսի
Թոռք	Poumon	Ագ միջեր
Լեղի	Fiel	Էօս
Լերդ	Foie	Գարս միջեր
Լիճնդ	Gencive	Տիշ կրի
Լիսենոսուկ	Péroné	Գուրու ինձին
Լորձունիք	Salive	Սալիյար
Լսելիք	Ouïe	Գուվչիյի սամիս
Խլութին	Surdité	Սաղրուլգ
Մամելիք, διος	Mâchoire	Զենէ ֆենիյի
Մղիկ	Avant-bras	Պիլք
Մղոսուկ	Cubitus	Պիլք ֆենիյի
Մոծրակ	Nuque	Էնսի
Մուծ	Moëlle	Իլիք
Կարճատեսուրին	Myopie	Դրսաս կօրուկ
Կզակ	Menton	Զենէ
Կծկանիք	Systole	Եիրկյին պիւղիւրնեսի
Կմախիք	Squelette	Պիրկվի ֆենիյի
Կող	Côte	Գապուրկա ֆենիյի [րի]
Կողմանային ոսկերք	Os pariétaux	Գաֆանըն հան ֆենիյի-
Կողոփոց	Rotule	Տիզ գալիաղը
Կուբարդ	Convexé	Միւհասսկա
Կուլս	Côté	Եան
Կուրծք	Poitrine	Կոսս
Կուտնկ	Talon	Էօժիկ
Հեռատեսուրին	Presbytisme	Ուզագտան սէչնի
Հերձատամունիք	Mâchelières	Ազր սիշերի
Հոստելիք	Odorat	Գուվչի շամին

Ճակատային ոսկր	Os frontal	Աչն ֆենիյի
Ճաշակելիք	Goût	Գուվչիկ զախա
Ճարայ	Graisse	Իչ եաղը
Մազակերպ ոսկր	Ethmoïde	Գախտքի տիւնադ
Մաղձ	Bile	Սաֆրա
Մարմին, իրան	Corps	Թիճ
Մարսողութիւն	Digestion	Սիւսիրսէ
Մէջք, երիկամունիք	Reins	Պիլ, պէօվրէք
Միջամաս	Médian	Օրսա փարմագ
Մկունիք, դնդերք	Muscle	Ազակը
Մորք	Peau	Տրի
Շառաւղոսուկ	Radius	Պիլկյին ինձէ ֆենիյի
Շնչափող	Larynx	Խրրդագ
Շնչերակ	Artère	Շահ տամար
Շնչողութիւն	Haleine, souffle	Նիժկս
Շօսփելիք	Tact, toucher	Գուվչի լիւն
Ոլոք	Tibia	Պանաղըն եօն ֆենիյի
Ողնածուծ	Moëlle epinière	Գապուրկա իլիյի
Ողնայար	Vertèbre, épine dorsale	Օնուրդա
Որվայն	Ventre	Գարն
Ուզեղ	Cerveau	Պիլը
Պարանց	Gorge	Պողազ
Զիղ	Nerf	Սիճիր
Զղային դրութիւն	Système nerveux	Աշամէրը սիճիր
Բնագական ոսկերք	Os nasaux	Պուրուէ ֆենիյի
Սառնուրակ աչաց	Cristallin	Էզ-զիւամանիյի
Սեպակերպ ոսկր	Sphénoïde	Պաշըն ֆենիյի
Սիրս	Cœur	Եիրկ
Սնարական ոսկր	Os occipital	Էնսի ֆենիյի
Սնունդ	Nourriture, aliment	Նաֆազա

Ստամոքս	Estomac	Միտէ
Ստեղունիք	Phalange	Փարմագ ժկմիյի
Սրինիք	Mamelle	Միտէ
Մրանուլր	Sacrum	Դույրուգ սօզու : Ժկմիյի
Մրունիք	Jambe	Պահագ
Վեճաբարք	Tarse	Այագ բարադր
Վիզ	Cou	Պօյուն
Տեսանիլիք	Vue	Դուվիկի պասըրէ
Տողուկ, քուք	Crachat	Թիւիհրիս
Ցուցանաս	Index	Շինատէր փարմաղը
Փայծաղ	Rate	Տաղագ
Քրափողիք	Narine	Պուրուն ժկլիյի
Քմական ոսկերք	Os palantins	Եխոց ժկմիյի
Քունական ոսկերք	Os temporaux	Դուշագ թօզու : Ժկմիյի
Քունիք	Tempes	Դուշագ թօզու :

ՑԱՆԿ

	Եջ
ԱՐ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻՍ . . . . .	Ե
ԳԼՈՒԽ Ա.	
Մարդկային արտաքին կազմութիւն . . . . .	4
ԳԼՈՒԽ Բ.	
Ցեղի մարդկային . . . . .	5
ԳԼՈՒԽ Գ.	
Ուկորժիք . . . . .	8
Ուկորժիք զլիսյ . . . . .	9
Ուկորժիք իրանի . . . . .	14
Ուկորժիք անգամոց . . . . .	18
ԳԼՈՒԽ Դ.	
Մկունիք կամ դնդերք . . . . .	23
ԳԼՈՒԽ Ե.	
Զգային դրութիւն . . . . .	28
ԳԼՈՒԽ Զ.	
Զգայութիւն . . . . .	34
Հօսակիելիք . . . . .	35
Հոստելիք . . . . .	37
Հաւակիելիք . . . . .	40
Լսելիք . . . . .	44
Տեսանելիք . . . . .	47
ԳԼՈՒԽ Է.	
Սննդականութիւն . . . . .	58
ԳԼՈՒԽ Ը.	
Մծումն եւ զատումն . . . . .	73
ԳԼՈՒԽ Թ.	
Արիւն . . . . .	75
ԳԼՈՒԽ Ժ.	
Արեան ցըսն . . . . .	78
ԳԼՈՒԽ ԺԱ.	
Շնչողութիւն . . . . .	87
ԳԼՈՒԽ ԺԲ.	
Զայն . . . . .	94
ԳԼՈՒԽ ԺԳ.	
Զերմութիւն մարմնոյ . . . . .	96
ՄԻ ՔԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ	99

~~215~~

~~PMM~~

2013



